

Ա. Ի. ՍՈԼՆՑԵՎ

-104

ԶՈՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԳ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1938

Ա. Ի. ՍՈԼՆՑԵՎ

ԶՈՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ

ԽԱՀՄԱՆ ՀՈՂՔՈՂՈՄԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՈՒ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱ-
ՎՈՐ ՎԱԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ Ե ՎՈՐԴԵՍ ԶԵՐ-
ՆԱՐԿ ԶՈՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՖ. Ի. Ա. ՅԱԻՉԱՆԻԿՈՎԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԹԱՐԳՄ. ԴՈՑ. Ն. ՄԱԼԱԹՅԱՆ

Հ 25/22

Հ 24849



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

ԿԵՐԵՐԻ ԱՆԱԼԻԶ

ՄԻԶԻՆ ՆՄՈՒՇ ՎԵՐՑՆԵԼԸ

Միջին նմուշ կոչվում ե նյութի այն փոքր քանակը, վորը վերցված ե այնպիս, վոր հնարավորին չափ լրիվ արտացոլի հետազոտման յնթակա նյութի ամբողջ պաշարի կազմի ու հատկությունները:

Առաջին հայացքից կարող ե թվալ վոր կերի միջին նմուշ վերցնելը շատ հասարակ բան է, սակայն իրականում այդ բավականին բարդ խնդիր է, և միջին նմուշ վերցնելու բոլոր կանոնները ճշտությամբ ցույց տալը բավականին դժգար գործ է: Մենք կարմ կերպով կնկարագրենք հատիկի, ալյուրի, թեփի, արմատապտուղ-ների և պալարապտուղների, խոտի, ջրառատ կերերի և քուսպի միջին նմուշ վերցնելու յեղանակները:

Հատիկի միջին նմուշը վերցնելիս սովորաբար սկզբում վերցնում են այսպես կոչված «գլխավոր նմուշը», իսկ զրանից արգեն ջոկում են միջին նմուշը: Յեթև հատիկը պարկերի մեջ ե, այդ դեպքում գլխավոր նմուշը վերցնում են յուրաքանչյուր լերկրորդ, հինգերորդ, տասերորդ և այլն պարկից (այդ կախված ե պարտիայի մեծությունից) հատուկ հարմարանքի — նմուշակալի միջոցով: Կարած պարկերից (յեթև վորեւ պատճառով չի կարելի բաց անել) հատիկը վերցնում են պարկային նմուշակալի միջոցով (նկ. 1), խրենով այն սուր ծայրով պարկի մեջ: Նմուշակալի հետ պարկից դուրս ե գալիս քիչ քանակությամբ հատիկ: Վագոններից և նավամբարներից գլխավոր նմուշ ստանալու համար նմուշը կազմում են՝ վերցնելով զանազան տեղերից — վերեկից, ներքեկից և այլն, առանձին նմուշներ, վորի համար գործադրում են հատուկ նմուշակալներ: Սրանց վրա լերբեմն հազցը ու լինում ջերմաչափ, վորով գաղափար են կազմում այս կամ այն խորության վրա գտնվող հատիկի ջերմաստիճանի մասին: Նմուշները



վերցնելուց հետո դրանք փռում են բրեղենտի վրա և աչքաչափով դատում են նրանց միատարրության մասին: Յեթե վերցրած նմուշները միակերպ են, դրանք իրար են խառնում և ստանում գլխավոր նմուշը: Յեթե նմուշները միակերպ չեն, պետք ե կազմել մեծ թվով գլխավոր նմուշներ:

Այս ձեռվ ստացված գլխավոր նմուշից վերցնում են մի փոքր մասը, վորը և կլինի միջին նմուշը: Գլխավոր նմուշից ավելի խնամքով միջին նմուշ վերցնելու համար սովորաբար այսպես են անում: Գլխավոր նմուշ կազմելուց հետո այն խառնում են: Սովորաբար գըլխավոր նմուշը խառնում են դուրս քաշովի լայնակի պատ ունեցող փայտե արկղի մեջ, կարտոնե քարտերի միջոցով: Գլխավոր նմուշն այդ արկղում բարակ շերտով հավասարեցնում են և բաժանում 8—10 մասի: Հետո այդ մասերն աստիճանաբար լցնում են վորեն ընդունարանի մեջ, ընդ վորում խիստ հետևում են, վոր լուրաքանչյուր մասի հատիկային փոշին նույնպես լցվի ընդունարանի մեջ և գլխավոր նմուշի դույդ բաժինները չխառնվեն կենտ բաժինների հետ, այսինքն դույդ նմուշները լցվեն մի ընդունարան, իսկ կենտները՝ մյուս: Այս բոլոր պայմանները պահպանելու դեպքում այս կամ այն ընդունարանի պարունակությունը կարելի է ընդունել վորպես միջին նմուշ: Յեթե ստացված նմուշը մեծ դուրս գա, պետք ե այդ նորից լցնել արկղի մեջ և նույն կերպ վարվել, մինչև վոր ստացվի վոչ մեծ քաշ ունեցող միջին նմուշ (որինակ՝ 200 գ):

Այլուրի և թեփի միջին նմուշ վերցնելու յեղանակը նման են հատիկի նմուշ վերցնելու յեղանակին:

Արմատա-պալարապտուղների միջին նմուշը կազմում են տարբեր մեծության արմատներից և պալարներից, վերցնելով դրանք ըստ հնարավորության այնպիսի հարաբերակցությամբ, վորպիսին ունեն նրանք տվյալ պարտիալի մեջ: Նմուշը պետք ե լինի մոտ 8 կգ:

Խոտի միջին նմուշ վերցնում են խոտի համամիութենական ստանդարտի¹⁾ համաձայն՝ հետեւյալ կերպ.

1. Միջին նմուշը վերցնում են այնպես, վոր նաև միշտ կերպով բնութագրի այն պարտիան, վորից վերցված ե:

2. Զամամլած խոտից նմուշ վերցնում են վոչ պակաս, քան 10 տարրեր տեղից՝ յուրաքանչյուր 15 տոնն խոտից:

3. Մամլած խոտից միջին նմուշ վերցնելիս նախ քանդում են

1) Ցես համամիութենական ստանդարտ «Сенос» ОСТ ВКС-5749 (ОСТ 4994-ի փոխարեն): Սաանդարտը տարածվում է հետեւյալ 6 տիպ խոտերի վրա: 1) ցանովի, 2) վոլովզով մարդաշնանի, 3) տափաստանային, 4) լեռնային, 5) անջղղի մարդագետնային և 6) ձահնային: «Ստանդարտից» 1935 թ.

խոտի հակի մետաղալարը, ապա զգուշությամբ հակի տարբեր շերտերից վերցնում են խոտի նմուշներ այն հաշվով, վոր հակերի 3°/ο հց վերցված լինի վոչ պակաս մեկական շերտ։ Անհրաժեշտ ե հետեւ, վոր խոտը չփշրպի և ավելորդ փոշի չառաջանա։

4. Յեթե խոտը բարձված ե զագոնների վրա, միջին նմուշ վերցնում են յուրաքանչյուր վագոնից առանձին, լեթե խոտը միատեսակ ե։

5. Յեթե խոտը դիպված ե մեծ մասսայով, այդ դեպքում, յեթե նա միակերպ ե, միջին նմուշ կազմում են 10-ական կդ. յուրաքանչյուր 15 տոննից։

6. Բեռնանավիր (բարժի) կամ պահեստի խոտի բնութագիրը վորոշվում ե միջին նմուշների անալիգների միջին թվաքանականների հիման վրա։

7. Յեթե մամլած խոտի հակերի 10°/ο հց պակասն ունի շեղումներ, վորոնք թված են դասալին խոտի վորոշման մեջ (տես ստանդարտը), այդ դեպքում հակերի շերտերը ծառացում են միջին նմուշ կազմելու համար, իսկ յեթե ավելի լին, նրա շերտերը չեն ծառացում միջին նմուշ կազմելու համար, այլ առանձին են հաշվի առնվում և նրանցից կազմում են հատուկ նմուշ։

Ստացված միջին խոտանմուշն անհրաժեշտ ե խառնել։ Դրա համար խոտը փոռում են բրեզենտի վրա բարակ շերտառի։ Յեթե այդ ժամանակ կհայտաբերվեն հողի, գոմաղբի կտորներ և խողոր ցողուններ, արդ դեպքում անհրաժեշտ ե պարզել, պատահական խառնուրդ ե այդ, թե բնորոշ յերեսույթ՝ տվյալ խոտի համար։ Առաջին դեպքում պետք ե զրանք դեն գցել, յերկրորդ դեպքում անհրաժեշտ ե առանձին կշռել և քաշը մտցնել խոտի չուտվող մասի մեջ։

Խառնված խոտանմուշի տարբեր տեղերից վերցնում են մոտ 200 գ խոտ՝ խոնավությունը և մյուս մասերը վորոշելու համար, վորի նույտակով պահում են առաջկված (որութեան) խցանով փակվող պակլիա բանկայի մեջ։


Զրառատ կերերի (բարզա, գարեջրի դիրտ և այլն) միջին նմուշները վերցնում են խառնելուց հետո և իսկուն անալիգի լին յեն թարկում։ Յեթե հնարավոր չե անմիջապես անալիգ անել, միջին նմուշը կոնսերվում են՝ ավելացնելով քլորոֆորմի և տոլուոլի հավասար ծավալներով խառնուրդից մի քանի կաթիլ։

Քուսպերի միջին նմուշ վերցնելիս, ընդհանուր կանոններից քացի, պետք ե հիշել, վոր քուսպի միկնուցն սալիկի տարբեր տեղերի քիմիական կազմը միատեսակ չե։

Անալիզի համար ստացված միջին նմուշների մեջ պետք է վորոշել ալյափես կոչված նախնական խոնավությունը: Այդ վորոշան մեթոդի կան հետեւալն ե.

Կոպիտ կերերի անալիզի գեղքում միջին նմուշից առանձնացված մասը (առվրաբար մոտ 200 գ) արագ կարտում են մկրատով 1—2 սմ մեծությամբ, այնուհետև այդ մասսան տեղափորում են թասի մեջ, և այդ յերկուսի կշիռը վորոշում են տեխնո-անալիտիկ կշեռքով: Ապա թասն իր պարունակության հետ միասին դնում են չորացնող պահարանում 60—65° ջերմության տակ և չորացնում այնքան ժամանակ, մինչև վոր արտաքին նշաններով (որինակ՝ շրջափելով) կարելի կլինի համարել, վոր կիրք բավարար չփոխ չորացել և կարելի յե հետազում հեշտությամբ աղալ աղացով: Սակայն արտաքին գնահատումը վճռական գեր չի կատարում և չորացումը դադարեցնում են միայն այն ժամանակ, յերբ չորացվող նյութի յերկու իրար հաջորդող կշռումների ժամանակ տարբերությունը 0,5 գ-ից ավելի չի լինի¹⁾: Դրանից հետո թասը նյութի հետ թողնում են լարորատորիայի մթնոլորտում մի քանի ժամ, աշխատելով, վոր նրա վրա փոշի չնստի:

Բաժակի պարունակությունն այս ձևով ուղաչոր գրության հասցնելով, բաժակի հետ միասին նորից կշռում են և բաժակի ունրա պարունակության սկզբնական քաշի ու ողաչոր գրության ժամանակ ունեցած քաշի տարբերությամբ վորոշում են նախնական խոնավության չափը: Ստացված թիվը բազմապատկելով 100-ով և բաժանելով սկզբնական թարմ նյութի քաշի վրա, ստանում են հետազոտվող կերի նախնական խոնավության տոկոսը:



Նկ. 2


1) Նկատի ունենալով, վոր կերերի մեջ գտնվող մի շարք նյութեր հեշտությամբ ռջախանում են, խորհուրդ ե արվում ավելի ճիշտ անալիզների դեպքում, կոպիտ և այլ կերերը թե մասնակիուրեն և թե վերջնականապես չորացնել (տես հիւրուպիկի խոնավության վորոշումը) բնդիքերենտ դազի հոսանքի տակ՝ վակուում: ալյափատի մեջ (Նկ. 2): Պետք է նմանապես խորհուրդ տալ ֆերմենտներով հարուսալուր կերերի անալիզի գեղքում կշռված թարմ նյութը միանգամբ կարձ ժամանակվա ընթացքում տաքացնել կամ չորացնող պահարանում մինչև 90° կամ կոխով յան փակ լիռացող ստերիլազարի գոլրշում մեջ, վորպեսզի մեջ գտնվող ֆերմենտները քայլային: Ապա ջերմաստիճանն իջեցնում են և չորացումը շարունակում են չորացնող պահարանում 60—65°-ի առաջ:

Հացահատիկների, թեփի, ալյուրի, գարեջըի դիրտի, քուսպի և այլ կերերի նախնական խոնավությունը վորոշում են նույն ձևով, ինչ վոր կոպիտ կերերինը:

Արժատառայալարապտուղների նախնական խոնավության վորոշման մեթոդիկան ունի մի քանի առանձնահատկություններ: Արժատապտուղներն սկզբում լվանում են ջրով հողի կոշտերը հեռացնելու համար և գգուշությամբ սրբում են մաքուր սրբիչով: Այնուհետև միջին նմուշի յուրաքանչյուր գլխից արագ կերպով, ամբողջ գլխի յերկարությամբ, կտրում-հանում են վորոշ կտոր, վորը պետք և կաղմի գլխի $\frac{1}{4}$, $\frac{1}{8}$ կամ $\frac{1}{16}$ մասը, նայած միջին նմուշի մեծությանը՝ այն հաշվով, վոր անմիջականորեն անալիզի համար լինի մոտ 1500 գ նախնական նույթ: Դուրս բերված կտրոնները լայնակի կտրառում են՝ վերածելով բարակ թիթեղիկների, վոր և շարում են ապակե ձողիկների վրա: Շարված թիթեղիկները կշռում են և ապա, հետևելով, վոր իրար չկպչեն, տեղափոխում են չորացնող պահարան, վորտեղ կարճ ժամանակ տաքացնում են մինչև 90° -ի տակ, ապա ջերմաստիճանն իջեցնում են և չորացնում $60-65^{\circ}$ -ի տակ: Այնուհետև նյութը հասցնում են ոգաչոր գրության, կշռում են և վորոշում նախնական խոնավության չափը: Պալարապտուղների



Նկ. 3



Նկ. 4

նախնական խոնավությունը վորոշում են ընդհանուր առմամբ նույն կերպ, ինչպես արժատապտուղներինը:

Զօրիկ և կիսաջրիկ կերերի նախնական խոնավությունը վորոշելիս հաճախ ալսպես են անում: Միջին նմուշը լավ խառնում են և դրանից վերցնում են մի կշռամաս այն հաշվով, վոր ստացվի մոտ

200—250 գ ողաչոր նյութի Այնուհետև կշռանյութը բաժակի մեջ գոլորշիացնում են ջրային բաղնիքի վրա և ապա չորացնում 60—65°-ի տակ: Հետագա մեթոդիկան սովորական է:

Նախնական խոնավությունը վորոշելուց հետո ողաչոր մասսան անհրաժեշտ և մանրացնել վորովճետներ միայն այդպիսի համեմատաբար միակերպ վիճակում կարող ե նյութի փոքր կշռամասը հետագա անալիզների ժամանակ տալ նմուշի միջին կազմի համար բնորոշ արդյունքներ և անալիզների ժամանակ հետազոտվող նյութին ավելի սերտ կերպով շփման մեջ կլինի զանազան ռեազենտների (որինակ՝ լուծիչների և այլն) հետ կերերի մանրացումը սովորաբար կատարում են սկզբում «Եքսցելսիոր» աղացի (նկ. 3) միջոցով, իսկ հետո, ավելի մանր աղացվածք ստանալու համար՝ Մերկերի աղացի միջոցով (նկ. 4): Աղացված մասսան մաղում են մեկ միլիմետրանոց մաղով: Մաղով չանցած մասնիկները նորից աղում են Մերկերի աղացով, մինչև վոր մնացորդը ամբողջ աղացվող նմուշի 20¹⁰-ից ավելի չլինի: Դրանից հետո մնացորդը խառնում են ամբողջ նմուշին:

Աղացած նմուշը պահում են հետազա անալիզների համար առհղկված խցանով փակվող բանկայի մեջ, ընդ վորում բանկան լցնում են մինչև իր ծավալի կեսը¹⁾:

ՀԻԳՐՈՍԿՈՊԻԿ ԽՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հետազոտվող կերի մեջ դժնվող այս կամ այն նյութի տոկոսային քանակը հաշվելը սկզբում կատարվում ե ողաչոր կշռանյութի նկատմամբ, վորը պարունակում ե վորոշ քանակությամբ այսպես կոչված հիգրոսկոպիկ ջուր: Այդ ջրի քանակը կախվոծ ե շրջապատի ողի ջերմաստիճանից ու խոնավությունից և բավականին զգալի կերպով տատանվում ե: Այդ պատճառով ել անհրաժեշտ և հիգրոսկոպիկ ջրի

1) Պետք ե հիշել, վոր անալիզվող կերը ողաչոր վիճակին հասցնելու նորատակը միայն նախնական խոնավությունը վորոշելը չեւ Բանս և, վոր շատ ջուր պարունակող կերերը խիստ յենթակա յեն զանազան փոփոխությունների, վորը կախված ե, զիսավորապես, հետեւյալ հանգամանքներից: Նախ խիստ ջրառատ նյութերի մեջ շատ շուտ են զարգանում բակտերիաներ, սնկեր, յերկրորդ՝ խոնավ կերանյութերից շատերը հեշտությամբ են փոփոխման յենթարկվում զանազան ֆերմենտատիվ պրոցենների ազդեցության տակ: Մյուս կողմից, կերերը, գտնվելով ողաչոր վիճակում, ջուր են պարունակում ավելի կամ պակաս կայուն քանակով, վորովճետների ջուրն այդ գեղաքում նյութի մեջ գտնվում ե շրջապատի ողի խառնգության համապատասխան: Այդ պատճառով հետագա անալիզների զեղքում ողաչոր նյութի մեջ կշռանյութ վերցնելին մեծ սխալներ չեն առաջանա: Վերջապես ուսումնառիվզով նյութից խոնավությունը մասսամբ հեռացնելը նպաստում ե, վոր կերն ավելի լավ անհրաժեշտ աղացու ժամանակ:

քանակը վորոշելուց հետո համասկատասխան վերհաշվումների միջոցով ստանալ այս կամ այն նյութի տոկոսային քանակը ցույց տվող թվով վերը բացարձակ չոր կշռանյութի նկատմամբ։ Այս վերջին թվերը նիւգամայն անհրաժեշտ են, վորովհետև նրանք հնարավորություն են տալիս կերպը համեմատել իրար հետ, հաշվի չառնելով այն, թե վորոշեղ և տարվա ինչ ժամանակ ե կատարված անալիզը։

Հիգրոսկոպիկ խոնավությունը վորոշում են հետեւյալ յեղանակով. ողաչոր նյութը չորացնում են 100—105°-ի տակ մինչև կայուն կշռում ստացվի և նախնական կշռից հանում են ստացված վերջին կշռը։ Նյութի կշռից պակասածը հենց կլինի տվյալ նյութի հիգրոսկոպիկ ջրի քանակը։ Սակայն պետք ե հիշել վոր կերպի անալիզի դեպքում հիգրոսկոպիկ ջրի այդ վորոշումը միշտ կապվում ե մի շարք վորոշ սխալների հետ։ Բանն այն ե, վոր կերպից շատերը դժվարությամբ են կորցնում իրենց հիգրոսկոպիկ ջուրը,


իսկ բարձր ջերմաստիճանը մյուս կողմից նպաստում ե ոքսիդացման պրոցեսներին, վորի հետեանքով ավելանում ե նյութի կշռը։ Վերջապես, բարձր ջերմաստիճանը հեշտությամբ նպաստում ե, վոր կերպի միջից հեռանան յեթերային յուղերը, ցնդող թթուները, կերպի քայլակման արդյունքները և այլն։ Այս բոլոր հնարավամանքները, միշտ անալիզ կատարելու անհրաժեշտության դեպքում, ստիպում են շատ բարդացնել մեթոդիկան (տես 6 եջի ձանոթությունը)։

Հիգրոսկոպիկ խոնավությունը վորոշելիս սովորաբար լաբորատոր պրակտիկայում կիրառում են չորացման, թեև վոչ միանգամայն ձիշտ, բայց բավականին պարզ յեղանակ։ Այդ յեղանակն ել մենք կնկարագրենք.


ԱՆՈԹՆԵՐ ՅԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

1. Չորացման բաժակ (բյուկա) հղկած կափարիչով (նկ. 5):

2. Չորացման պահարան ջերմաչափի հետ (նկ. 6):



նկ. 6



նկ. 7

3. Եքսիկատոր՝ հղկած կափարիչով (նկ.7), մեջը CaCl_2 լցրած:

4. Մետաղյա ունելի կշռաբաժակների տեղափոխման համար:

ՎՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՅՑՔԸ

1. Անալիտիկ կշռով կշռել բոլորովին մաքուր և չոր կշռաբաժակ՝ կափարիչի հետ միասին (ամբողջ աշխատանքի ընթացքում բաժակը ձեռքով չփերցնել այլ ոգտագործել մետաղյա ունելի):

2. Լցնել բաժակի մեջ հետազոտվող ողաչոր նյութից մոտ 2 գ:

3. Անալիտիկ կշռով կշռել բաժակն իր կափարիչի և հետազոտվող նյութի հետ միասին:

4. Հաշվելով դուրս բերել հետազոտվող կշռանյութի քաշը՝ դուրս դալով բաժակի և իր կափարիչի ու հետազոտվող նյութի ընդհանուր քաշից դատարկ բաժակի և իր կափարիչի քաշը:

5. Չորացնել կշռանյութը 3—4 ժամ չորացնող պահարանում $100-105^{\circ}$ -ի տակ, բաց անելով բաժակի կափարիչը և այն տեղավորելով բաժակի կողքին:

Չորացնելու ժամանակ պահարանի մեջ նոր, ջրով հարուստ նյութ չպետք ե դնել, վորովհետև նա կարող է շատացնել պահարանի միջի խոնավությունը:

6. Նյութ պարունակող բաժակը փակել կափարիչով և 20—30 րոպեյով դնել եքսիկատորի մեջ:

7. Անալիտիկ կշռով արագ կշռել փակ բաժակը նյութի հետ միասին:

8. Փակ բաժակը նյութի հետ միասին տեղավորել եքսիկատորի մեջ (չորացնող պահարանի մոտ տանելու համար):

9. Նորից չորացնել նյութը մոտ մեկ ժամ և նորից կշռել՝ կատարելով նույն գործողությունները, ինչ վոր վերեւում նկարագրեցինք:

10. Կրկնել մոտավորապես լուրաքանչյուր ժամը մեկ անգամ չորացնելու և կշռելու բոլոր գործողություններն այնքան ժամանակ, մինչև վոր նախորդ քաշը հետագա քաշից կտարբերվի զրամի տաս հաղարերորդական մասով: Ցերպեմն քաշը պակասելուց հետո սկսում ե նույնիսկ մի քիչ ավելանալը Ցերպեմն քաշի այսպիսի ավելացում նկատվում է յերկու-յերեք հաջորդական կշռումների ժամանակ, այդ դեպքում չորացումը պետք ե դադարեցնել:

Ստացված մի շարք թվերից վերցնել ամենափոքր թիվը, վորն և ընդունել բաժակի, կափարիչի և նյութի իսկական քաշը բացարձակ չոր վիճակում:

11. Բաժակի, կափարիչի և ողաչոր նյութի ընդհանուր քաշից հանել բաժակի, կափարիչի և բացարձակ չոր նյութի ընդհանուր քաշը:

Տալբերությունը ցուց կտա, թե չորացման հետևանքով կշռանյութից վնասան ե պակասել, այսինքն գուրգչիացած ջրի քաշը:

12. Հաշվել՝ գուրս բերել հետազոտվող կերի մեջ յեղած հիգրոսկոպիկ խոնավության տոկոսային քանակը հետազոտվող ոդաչոր կշռանյութի նկատմամբ՝ հետեւյալ փորմուլայով.

$$x = \frac{100 \cdot a}{b},$$

վորտեղ $x = \frac{100 \cdot a}{b}$ հիգրոսկոպիկ խոնավության գտնելիք տոկոսային քանակն ե, $a -$ կշռանյութի քաշի չորացման հետևանքով առաջացած պակասորդն ե, $b -$ հետազոտվող կշռանյութը ոդաչոր վիճակում:

13. Համեմատել ստացված տոկոսը զուգահեռ վորոշվող կշռանյութի տոկոսի հետ: Յերկու զուգահեռ վորոշվող կշռանյութերի տոկոսների միջնը 6,15 տարբերությունը սովորաբար թույլատրելի յե համարվում:

14. Գուրս բերել ստացված յերկու տոկոսների միջինը և այդ համարել հետազոտվող կերի հիգրոսկոպիկ խոնավության տոկոսը ոդաչոր նյութի կշռամասի նկատմամբ¹⁾:

Հիգրոսկոպիկ խոնավության վորոշման նկարագրված յեղանակը, յերբ նյութը չորացնում են ջերմության 100—105°-ի տակ մինչև կայուն կշիռը, մի շաբաթ գեղքերում կարելի յե փոխարինել կշռանյութը վորոշ ժամանակամիջոցում չորացնելով: Այդ գեղքում պետք ե առանձնապես հետեւյալ վոր չորացնող պահարանում լինի պետք յեղած ջերմաստիճանը և չորացման ժամանակ պահարանի մեջ չտեղափորել ջրով հարուստ նոր նյութ, վորը կարող ե ավելացնել պահարանի խոնավությունը: Չորացման ժամկետերը կարող են տատանվել մոտավորապես 3-ից մինչև 6 ժամ՝ նյութի խոնավությանը, նրա ոքսիգնանալու ընդունակությանը և այլն:

Տարբեր նյութերի համար վերջնական ժամկետ պետք ե սահմանել վորձնական ստուգումների հիման վրա:

«ՀՈՒՄ» ՄՈԽԵԲԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Կերի մեջ յեղած մոխրի քանակն ուրիշ տվյալների հետ միասին կարող ե վորոշ չափով բնութագրել տվյալ կերը: Այսպես, որին նակ, անձրեսի տակ ընկած խոտը և անձրեսից չթրջված խոտը մոխրի պարունակության տեսակետից միանգամայն տարբեր են: Ճահճալին հողերի վրա աճած խոտը սովորաբար ավելի աղքատ ե մոխրով, քան

¹⁾ Խորհուրդ են տալիս նաև կերերի անալիզի ժամանակ (տես հետո) զուգահեռ վորոշումների թույլատրելի տարբերությունն ընդունել վորոշման բացարձակ մեծության 20/0-ից փոչ ավելի:

անջրդի մարգագետինների խոռոք։ Մոխրի խիստ բարձր տուկոս ցույց տվող թվերը լերսեմն նշան են, վոր կերն զգալիորեն կեղտոտված և մեխանիկական խառնուրդով (ավագ և այլն)։ Կարեռը և կերի մոխրի տոկոսը վորոշել նաև նրա համար, վոր այդ քանակությունը կերի կազմի մյուս վորոշմաների տվյալների հետ միասին հնարավորություն և տալիս տարբերությամբ վորոշել կերի այսպես կոչված անաղոտ եքստրակտային նյութերի քանակը վերջապես, մի շարք գեղքերում զոտեխնիկի համար կարող և հետաքրքիր լինել մոխրի բաղադրիչ մասերի վորոշումը։

Գոյություն ունեն հետազոտվող նյութերի մոխրացման զանազան յեղանակներ։ Զոտեխնիկական անալիզի լայն պրակտիկայում վորոշում են հետազայում շարադրվող պարզ յեղանակով այսպես կոչված «հում» մոխրի քանակը։ Մոխրի կազմի մեջ մտնող այս կամ այս քիմիական ելեմենտները սովորաբար չեն վորոշում։ «Հում» մոխրի անվան տակ հասկանում են այն մնացորդը, վոր ստացվում և հետազոտվող նյութն աստիճանաբար այրելու դեղքում։ Առ այդ, մնացորդի մեջ, բացի իսկական մոխրից, մեծ մասամբ պարունակվում են գեռնես չայրված ածխի մնացորդներ և մեխանիկական խառնուրդ (ավագ և այլն)։ Մյուր բոլոր հանգամանքներն ստիպում են աստիճանական ալրման հետևանքով ստացված մնացորդը համարել վոչ թե մաքուր¹), այլ «հում» մոխրի։

«Հում» մոխրի տոկոսային քանակը՝ վերահաշված բացարձակ չոր նյութի նկատմամբ, կարելի լի տեսնել, վորպես որինակ, հետեւալ թվերից։

Տախտակ 1.

Կերի անունը	Վարդագետինի խոռ	Կուտայի մոխրի անունը	Կերի անունը	Վարդագետինի մոխրի անունը
Սարգագետինի խոռ	7,11	Շաղգամ	9,95	
Ճահարին	6,35	Վարսակ	3,16	
Ցերեքնուկի	8,39	Վարսակ-շղթական	4,18	
Ցորենի ծղոտ	5,90	Ցորենի թեփ	6,39	
Ցորենի մղեղ	12,15	Արհածաղկի քուսպ	6,25	

1) Մաքուր մոխրի կոչվում է այն մոխրը, վոր չի պարունակում պատահական մեխանիկական խառնուրդներ (ավագ, ածխի մասնիկներ) և ազատ և ածխաթթվից, վորն առաջ և գալիս կշռանյութի մոխրացման ժամանակ։

ԱՆՈԹՆԵՐԻ ՑԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

1. Ճենապակյա տիգլ կափարիչով (նկ. 8):
2. Յերկաթյա յեռանկյուն՝ ճենապակյա մեկուսացմամբ:
3. Ստամիվ՝ ողակի հետ (նկ. 8):
4. Եքսիկատոր CaCl_2 -ի հետ:
5. Մետաղյա ունելի:

ՎՐՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. Լվանալ ճենապակյա տիգլը կափարիչի հետ միասին և չուրացնել:

2. Չորացրած տիգլը կափարիչի հետ միասին շիկացնել $\frac{1}{2}$ —1 ժամ:

3. Տիգլը կափարիչի հետ միասին ունելու ոգնությամբ կես ժամով տեղափորել եքսիկատորի մեջ պաղեցնելու համար (հետեւ եքսիկատորի կափարիչին, վորովհետեւ նա կարող ե բարձրանալ և ընկնել):

4. Տիգլը կափարիչի հետ միասին կշռել անալիտիկ կշռով:

5. Տիգլի մեջ լցնել հետազոտվող ողաչոր նյութից 1—5 գրամ:

6. Կշռել տիգլը, կափարիչը և տիգլի մեջ լցրած նյութը բոլորը միասին:

7. Հաշվիվներով դուրս բերել հետազոտվող նյութի կշռոը, հանելով տիգլի, կափարիչի և

նյութի ընդհանուր կշռից դատարկ տիգլի և կափարիչի կշռոը:

8. Շատ մեծ զգուշությամբ փակ տիգլը նյութի հետ միասին տաքացնել ողաքաշ պահարանում, այլոցը տիգլից հեռու պահելով:

9. Տիգլը այլոցին մոտեկ պահել Տաքությունը կարելի յե ուժեղացնել միայն այն ժամանակ, յերբ չոր թորման հետևանքով դադերի առաջանալը կդադարի:


10. Տիգլը թեթև կիսաբաց անել:

11. Մի քանի ժամ տիգլը շիկացնել մինչև վոր նրա միջից անհետանան ածխի մասնիկները: Վորոշ գեղքերում մոխրի մեջ պարունակվող աղերն ուժեղ տաքացման գեղքում հալչում են և շրջապատելով ածխի մասնիկները, չեն թողնում, վոր նրանք այլ դեպքում խորհուրդ ե տրվում տիգլը հանել կրակի վրայից, պաղեցնել առանց եքսիկատորի մեջ տեղափորելու և պաղեցրած տիգլի մեջ լցնել 2—3 կաթիլ թորած ջուր: Այնուհետեւ սկզբում շատ զգույշ



նկ. 8

ամբողջ ջուրը գոլորշիացնել տիպի միջից, ապա շարունակել շիկացումը: Անհրաժեշտության դեպքում այդ գործողությունը կրկնել միքանի անգամ: Այս յեղանակը հնարավորություն եւ տալիս, զոր մոխիրը մասամբ լուծվի ջրի մեջ և դուրս գան ածխի մասնիկները, վորոննք հետաքայում արդեն այրվում են:



Նկ. 9

14. Վորոշել «հում» մոխրի կշիռը՝ շիկացումից հետո դուրս գալով տիպի, կափարիչի և նյութի ընդհանուր կշիռից դատարկ տիպի և կափարիչի կշիռը:

15. Դուրս բերել «հում» մոխրի տոկոսային քանակը ողաչոր նյութի մեջ, ոգտագործելով հետեւյալ ֆորմուլան՝

$$x = \frac{100 \cdot a}{b},$$

վորտեղ x —«հում» մոխրի վորոնելի տոկոսն ե, a —«հում» մոխրի կշիռը, վորն ստացվել ե հետազոտվող նյութի կշռամասը շիկացնելու հետևանքով, b —հետազոտվող նյութի կշիռը ողաչոր վիճակում:

16. Ստացված տոկոսային քանակը համեմատել զուգահեռ կատարվող վորոշման տոկոսային քանակի հետ: Յերկու զուգահեռ վորոշումների տոկոսների մինչև $0,15$ տարրերությունը սովորաբար թույլատրելի յե համարվում:

17. Ստացված յերկու թվերից դուրս բերել միջինը և այդ ընդունել «հում» մոխրի վերջնական տոկոսը ողաչոր նյութի մեջ:

18. «Հում» մոխրի ստացված տոկոսը վերահաշվիլ բացաբանել

12. Շիկացրած տիպի լը կափարիչի և ստացված «հում» մոխրի հետ միասին արագությամբ տեղավորել եքսիկատորի մեջ՝ պաղեցնելու համար:

13. Անալիտիկ կը շեռքի միջոցով կշռել տիպը կափարիչի և նյութի հետ միասին և ապա նորից շիկացնելով և հետո պաղեցնելով՝ հասցնել կայուն կշռին:

Հոր նյութի նվատմամբ, դրա համար պետք ե ողաչոր նյութի «հում» մոխրի տոկոսը ցույց տվող թիվը բազմապատկել 100-ով և բաժանել այն տարբերության վրա, վորն ստացվում ե 100-ի և տվյալ կերի հիգրոսկոպիկ ջրի տոկոսի մեջն. ի վերջո կստացվի «հում» մոխրի տոկոսը կերի բացարձակ չոր նյութի մեջ:

Մասսայական անալիզների ժամանակ «հում» մոխրի քանակը վորոշելու համար, կարելի յե խորհուրդ տալ ոգտագործել ելեկտրական մուֆելային վառարան (նկ. 9). Այդպիսի վառարաններում կերի մոխրացումը պետք ե կատարել նույն (մոխրացման աստիճանականության իմաստով) գգուշությամբ, ինչպես վերևում ցույց տրվեց սովորական այրոցներով մոխրացնելու գեղքում:

«ՀՈՒՄ» ՃԱՐՊԻ ՎԱՐՈՇՈՒՄԸ (ԸՍՏ ՍՈԿՈՆԵՑԻ)

Կերի մեջ ճարպի այս կամ այն քանակն ունի մեծ նշանակություն: Յեթե համեմատենք ճարպերը ածխաջրատների և սպիտակուցների հետ, կտեսնենք, վոր ճարպերը հանդիսանում են ամենից ավելի քիչ ոքսիդացված նյութեր, այսինքն պարունակում են համեմատարար ափելի մեծ տոկոս ածխածին և ջրածին, հետեւբար և ընդունակ վերջնական ոքսիդացման դեպքում արտադրել մաքսիմում ջերմություն: Այդ միանգամայն ռելէֆ կերպով կարելի յե տեսնել հետեւալ թվերից.

Տախտակ 2

Ելեմնաների անունը	Ճարպեր	Ածխաջրատ-ներ	Սպիտակուց-ներ
Ածխածին (տոկոսներով)	76—79	44	53
Ջրածին	11—13	6	7
Թթվածին	10—12	49	23
Ազոտ	—	—	16
Հ գ. այրվելիս արտացընդում և փոքր կալորի	9500	4000	5500

Այստեղից պարզ ե, թե ինչ խոշոր գեր ե կատարում ճարպը վորպես պաշարանյութ, վորը կուտակվում ե կենդանու որգանիզմում առատ սննդի գեղքում և ծախսվում ե վատ սննդի դեպքում:

Բուլսերի մեջ ճարպը գտնվում ե մեծ քանակությամբ, գլխավորապես սերմերի մեջ, յերբեմն պառակների փափուկ մասում: Բույսերի սերմերի և պտուղների մեջ գտնվող «հում» ճարպի քանակի մասին կարելի յե գաղափար կազմել հետեւալ թվերից.

Բույսերի սերմերն ու պտուղները	«Հում» ճար- պի քանակը (տոկոսնե- րով)	Բույսերի սերմերն ու պտուղները	«Հում» ճար- պի քանակը (տոկոսնե- րով)
Ցորեն	1,5	Սորուկ	25—30
Աշոք	2,0	Մանանելի	30
Ցեղիպտացորեն	6,5	Գերչակ	50—60
Արեածաղիկ	24 (կճեպի հետ)	Ցեղնուռ կաղին	56 (առանց կճեպի)
Կանեփ	32	Զիթապտուզ	30—50
Բամբակի հունդ	35	Կոկոսի ընկույզ	30 (մասս մասի մեջ)
Կոտավհատ	40		
Խաշխաշ	40		

Մաքուր ճարպերն իրենց քիմիական կազմով հանդիսանում են յեռատոմ ալկոհոլ գլիցերինի և զանազան այսպես կոչված ճարպաթթուների լրիվ բարդ յեթերները, այդ ճարպաթթուների զլիսավոր ներկայացուցիչները հանդիսանում են պալմիտինի, ստեարինի և ութինի թթուները:

Ճարպերը ջրի մեջ չեն լուծվում, սակայն ջրի հետ թափահարելիս բաժանվում են կաթիլների՝ առաջացնելով եմուլսիան ավելի լավ և առաջանում այն գեպքում, յերբ ջրի մեջ գանվում են քիչ քանակությամբ սպիտակուց կամ հիմք կամ մի քանի ուրիշ նյութեր:

Ճարպերը լավ են լուծվում յեթերի, բենզինի, քլորոֆորմի մեջ, ծծմբագին յեթերի մեջ հեշտությամբ լուծվելու ընդունակության վրա ել հիմնված և ճարպի քանակական վորոշումն ըստ Սոկլետի:

Սակայն այդ գեպքում ծծմբագին յեթերի մեջ լուծվում են վոչ միայն ճարպերը, այլև ուրիշ նյութեր, վորոնցից կոչենք հետեւյալները՝ ճարպաթթուները, միատոմանիալկոհոլների բարդ յեթերները, այնուհետև այսպես կոչված ֆոսֆատիդները, ներկող նյութերը և այլն. Դրա շնորհիվ Սոկլետի մեթոդով հաջողվում է վորոշել միայն այսպես կոչված «հում» ճարպը, այսինքն ճարպը վորոշ քանակությամբ վերոհիշյալ կողմանակի նյութերի հետ. Ի հարկեւ այս հանդամանքը կարող է նվազեցնել Սոկլետի մեթոդի նշանակությունը, սակայն այնուամենայնիվ զորակացնիկական վլրակարգայում «հում» ճարպի վորոշումը կիրառվում է մեծ չափով, վորպես կերերի ուսումնասիրման ամենից ավելի տարածված մեթոդը:

«Հում» ճարպի տոկոսացին քանակը բացարձակ չոր նյութի հաշվով, վորպես որինակ, կարելի է տեսնել հետեւյալ թվերից.


Կերի անունը	Ճշգրիտ ճաղաքի սռմանական թվի վեցական մասը	Կոսային ճաղաքի սռմանական թվի վեցական մասը	Կերի անունը	Ճշգրիտ ճաղաքի սռմանական թվի վեցական մասը	Կոսային ճաղաքի սռմանական թվի վեցական մասը
Մարզադեմի խոռոք	3,16	Շաղամ	2,96		
Ճահճային խոռոք	1,70	Վարսակ	5,08		
Յերեխուկի խոռոք	2,48	Շվեդական վարսակ	4,55		
Ճորենի ծղոտ	1,50	Ճորենի թեփ	5,95		
Ճորենի մղեղ	1,83	Արեածաղկի քուսոլ	10,12		

Անորներ յեվ գործիքներ

1. Սոկուսի ապարատ (նկ. 10 և 11), վորը բաղկացած է չղկված, իրար վրա լավ հագցվող կոլբայից (100 լի. սմ. տարրողականությամբ), եքստրակտորից և հակառակ գնդավոր սառնարանից, ապարատի հետ

կա ջրային բաղնիք
նախազգուշական ցան
ցով կամ ավելի լավ
ե, ելեկտրական տաքա-
ցուցիչով.

2. Հատուկ եքստր-
րակցիոն թղթե պար-
կում, Յեթե պատրաս-
տի եքստրակցիոն
պարկում չկա, կա-
րելի յե պատրաստել
սովորական ֆիլտրի
թղթից, իրա համար
վերցնում են համա-
պատասխան տրամա-
դիմ ունեցող ապակյա-
խողովակ և նրա շուր-
ջը փաթաթում են
Փիլտրի թուղթ: Բա-
տացվում ե թղթի խո-
դովակ, վորի մի ձայ-



նկ. 11

17

ԸՆ Կապում են թելով, իսկ մյուսը կտրում են եքստրակտորի չափի համաձայն:

3. Չորացնող պահարան;
4. Եքսիկատոր;
5. Յերկու սովորական ջրային բաղնիք;
6. Սովորական ուղիղ սառնարան ստատիվի հետ;
7. Հաստապատ սրվակ թորված յեթերը հավաքելու համար;
8. Կեղեալցան, վորը հարմարեցրած և Սոկուտի ապարատի կոլբային և ունի յերկու անցք, վորոնցով անցնում են մեկ կարճ ապակյա խողովակ և մի ուրիշ բավականին յերկարը, վորը համարյա հասնում ե կոլբայի հատակը, Խողովակները վերեի մասում պետք ե կորացած լինեն, այնպես վոր կազմեն ուղիղ անկյուն:
9. Կիպի ապարատ՝ ածխաթթու գաղ ստանալու համար;
10. Չորացնող սրվակ ծծմբական թթվով՝ ինդիֆերենտ գաղը չորացնելու համար:

Ռեակտիվներ

Բացարձակ չոր ծծմբային յեթեր, վորը պատրաստվում ե հետեւալ կերպ. 200° խ. սմ. սովորական ծծմբային յեթեր թափահարում են մեծ բաժանարար ձաւարի մեջ 100 խ. սմ. ջրի հետ ափելով ձաղարի ծորակն ու խցանը. Թափահարելուց հետո ձաղարը շուռ են տալիս ծորակը գեպի վեր և ծորակը բաց են անուան յեթերի գոյորդները գուրս թողնելու համար. Վորոշ ժամանակ հետո ներփակի ջրի շերտը թափում են և փոխարեն նոր ջուր են լցնում. Ջրի հետ թափահարելու գործողությունը կը կնութեն են ելի յերկու անգամ. Ի վերջո ջուրը կը վանականի համար սովորական ծախություն յեթերի մեջ խառնություն ծեսու դանվող ամբողջ ալկոհոլ ու ացետոնը.

Այսուհետեւ սկսում են ծծմբային յեթերի չորացումը. Դրա համար յեթերը լցնում են կուբայի մեջ և նրա մեջ թիչ-քիչ գցում են մանրահատիկ հալած քլոր-կալցիում այնքան ժամանակ, մինչեւ վոր նա բալորովին կդադարի կաշելուց ։ Եթե ավելացնում են քիչ քլոր-կալցիում փակում են կոլբան և թողնում հանգիստ 2—3 որ Այդ գեպօռում յեթերը համարյա ամբողջապես ապահովում է ջրից.

Այսուհետեւ յեթերը փիտորում են թորմոն կոլբայի մեջ և վերջականապես ջրազուրկ են դարձնում մաքուր սետազակուն նատրիումի մի քանի կտորներով, կոլբան փակելով խցանալ, վորը միացած է քլոր-կալցիումով լցված խողովակի հետ. Զրած-նի բջարեների գուրս զալ վերջանալուց հետո, կոլբայի մեջ յեղած յեթերը թորում են մաքուր կոլբայի մեջ Յեթերը թորում են փոփոխվող ջրաւին բաղնիքների վրա, հետո վառվող այրոցներից, թորված յեթերը պետք ե լավ փակել և պահել սու և սութ տեղում:

ՎՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. Փորձանոթի մեջ լցնել հետազոտվող ողաչոր նյութից 5—10 գ. և կշռել անալիտիկ կշռքով փորձանոթը նյութի հետ միասին:
2. Փորձանոթի միջի նյութը դատարկել հատուկ թղթե պար-

կուճի (բնեա) մեջ և փակել մի կտոր ճարպաղութկ արած մաքուր քամբակով:

3. Կշռել դատարկված փորձանոթը և փորձանոթի ու նյութի միասնական կշռի թվից հանել դատարկ փորձանոթի կշռի թիվը՝ վորոշելու համար պարկուճի մեջ տեղափորված նյութի կշռով:

4. Պարկուճը հետազոտվող նյութի հետ միասին չորացնել չորացնող պահարանում $100 - 105^{\circ}$ -ի տակ յերեք-չորս ժամ:

5. Պարկուճը նյութի հետ միասին պաղեցնել եքսիկատորում:

6. Անալիտիկ կշռով կշռել Սոկալետի ապարատի մաքուր չոր կոլբան:

7. Չորացրած և պաղեցրած պարկուճը նյութի հետ միասին տեղափորել եքստրակտորի մեջ:

8. Սոկալետի ապարատի կոլբայի մեջ լցնել մաքուր չոր յեթեր այնքան, վոր բավականացնի եքստրակտորը մինչև կողքից կպած սիֆոնախողովակի վերեկի մասը լցնելու համար ու մի քիչ ել ավելցնելով մնա:

9. Խնամքով հավաքել ամբողջ ապարատը:

10. Գործի դնել սառնարանը:

11. Նախազուշական ցանց ունեցող ջրային բաղնիքի տակ վառել այրոցը (զգույշ, ավելի լավ ե ոգտագործել ելեկտրական տաքացուցիչ):

12. Եքստրակցիայի յենթարկել ճարպը 12 ժամվա ընթացքում: Այդ ժամանակ պետք ե տեղի ունենա հետեյալը: Կոլբան տաքացնելիս յեռացող յեթերի գոլորշիները եքստրակտորի խողովակով գնում են վեր և ապա սառնարանում խտանալով, կաթիլ-կաթիլ թափվում են պարկուճի մեջ: Հենց վոր եքստրակտորի մեջ կհավաքվի այնքան յեթեր, վոր նրա մակարդակը սիֆոնախողովակի վերին մասից քիչ բարձր կէինի (**№ 10 նկարի մեջ ձախ կողմում**), յեթերն իր մեջ լուծված ճարպի մի մասի հետ կիսուի կոլբայի մեջ և ամբողջ գործողությունը կկրկնվի: Անհրաժեշտ ե յեթերի տաքացումն այնպես կանոնավորել, վոր մեկ ժամվա ընթացքում յեթերը հետ թափվի կոլբայի մեջ **10 - 15 անգամ**:

13. Հանգնել այրոց և վորոշ ժամանակ հետո, յերբ յեթերի գեռալը կգաղարի, ապարատը քանդել և հանել յեթեր պարունակող կոլբան նրա մեջ լուծված «հում» ճարպի հետ միասին:

14. Կոլբան միացնել ուղիղ սառնարանին և յեթերը թորել ջրային բաղնիքի վրա: Բաղնիքի տակ կրակ չվառել, այլ ոգտագործել յեթերից հեռու տաքացրած ուրիշ ջուր:

15. Քանդել յեթերի թորման հարմարանքը և կոլբան փակել յերկու փոքր խողովակ ունեցող խցանով (**Տ-բդ սարք**):

16. Միացնել յերկար խողովակը՝ սկզբում չորացնող սրվակի հետ, իսկ հետո սրվակը՝ կիպի ապարատի հետ, վորը տալիս և ածխաթթու գազ, և կոլբան «հում» ճարպի հետ դնել յեռացող ջրային բաղն նիքի վրա՝ յեթերը կերչնականապես թորելու համար:

17. Յեռացող ջրային բաղնիքի վրա տաքացվող «հում» ճարպ պարունակող կոլբայի միջով անցկացնել չոր գազի հոսանք այնքան ժամանակ, քանի դեռ այդ գազը, անցնելով կոլբայի միջով, չի դադարի յեթերի հոտ արձակել¹⁾:



18. Քանդել յեթերի հեռացման համար գործադրը վող հարմարանքը, իսկ «հում» ճարպ պարունակող կոլբան սրբել ֆիլտրի թղթով և ապա չորացնել սենյակի չերմաստիճանում:

19. 8-րդ սարքի ոգնությամբ «հում» ճարպ պարունակող կոլբայի միջով անցկացնել սենյակի ոդ, գործելով ասպիրատորով (ածխաթթու գազը վանելու համար):

20. Կշռել «հում» ճարպ պարունակող կոլբան:

21. Վորոշել «հում» ճարպի կշիռը՝ գուրսու գալով կոլբայի և «հում» ճարպի ընդհանուր կշռից դատարկ կոլբայի կշիռը:

22. Հաշվով դուրս բերել «հում» ճարպի տոկոսային քանակին ողաշոր կշռանկութի մեջ, ոգտագործելով հետեւյալ փորձութան:

$$x = \frac{100 \cdot a}{b},$$

նկ. 12 վորտեղ x —«հում» ճարպի վորոնելի տոկոսն ե, ա—«հում» ճարպի կշիռը, b —հետազոտվող նյութի կշռամասը՝ ողաչոր վիճակում:

23. Համեմատել ստացված տոկոսը զուգահեռ վորոշվածի տոկոսի հետ: Ցերկու զուգահեռ վորոշութիւնիրի 0,20 տոկոս տարբերությունը սովորաբար թույլատրելի յե համարվում:

24. Դուրս բերել յերկու ստացված թվերի միջինը, վորն և ընդունել «հում» ճարպի վերջնական տոկոսն ողաշոր կշռանկութիւնից:

1) Ծալբանեղ գեպօռմ կարելի յե մեթոքիկան քիչ պարզացնել և յեթերի վերջնական թորումը չկատարել ինդիֆերենտ գազի սթուլութում, այլ յեթերի վերջնական թորման համար սահմանափակվել՝ չորացնելով կոլբան իր պարունակության հետ միասին չորացնող պահարանում՝ մինչև կայուն կշիռ ստացվելը:

25. Վերահաշվել ստացված մեծությունը բացարձակ չոր նյութի մեջ «հում» ճարպի տոկոսն ստանալու համար. այդ նպատակով հարկավոր և ողաչոր նյութի «հում» ճարպի վերջնական տոկոսը բազմապատկել 100-ով և բաժանել 100-ի ու տվյալ կերի հիգրոսկոպիկ ջրի տոկոսի տարբերության վրա. Ի վերջո կստանանք «հում» ճարպի տոկոսը կերի բացարձակ չոր նյութի մեջ:

Ուշադրության արժանի լե վ. Հեյդի (նկ. 12) սառնարանով եքստրակցիոն ապարատը: Նա բաղկացած է ընդունող կոլբայից, սառնարանից և եքստրակտորից: Ապարատի վերին մասը զործում է կամ վորպես սառնարան, յերբ ունի նույն դիրքը, ինչ վոր նկ. 12-ում, կամ հակառակ դիրքով—հանդիսանում է ընդունարան յեթերի համար: Կոլբան կարելի լե տաքացնել ելեկտրական լամպի ոգնությամբ, ինչպես այդ ցուց և տրված նկարում, կամ թե՛ հատուկ ելեկտրական տաքացուցիչի ոգնությամբ:

«ՀԹԻՄ» ԹԱՂԱՆԹԱՆ ՅՈՒԹԻ ՎՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴ ՀԵՆՆԵԲԵՐԳԻ
ՑԵՎ ՇՏՈՄԱՆԻ

Կերի միջի թաղանթանյութի վորոշումը շատ կարևոր է կերը քնութագրելու տեսակետից, վորովհետև կենդանիները թաղանթանյութը բավականին վատ են մարսում և հետևաբար նրա մեծ քանակը գցում է կերի վորակը:

Թաղանթանյութը (ցելուլոզ) պատկանում է ածխաջրատների խմբին: Ածխաջրատները, ինչպես հայտնի լե, հանդիսանում են ալկոհոլա-ոքսիդներ կամ նրանց անհիդրիդները, ընդ վորում ալկոհոլա-ոքսիդները կարող են գործել կամ վորպես ալտեհիգուալկոհոլներ, կամ ուրիշ գեպքերում՝ վորպես կետոնո-ալկոհոլներ: Ածխաջրատները կարելի յե բաժանել յերկու խմբի՝ մոնոսախարիդներ և պոլիսախարիդներ: Մոնոսախարիդներն ամենապարզ ածխաջրատներն են: Հստ կառուցվածքի նրանք ալկոհոլո-ոքսիդներն են կամ նրանց իզոմեր ալտեհիգուալկոհոլներ կամ կետոնո-ալկոհոլներ:

Պոլիսախարիդները հանդիսանում են մոնոսախարիդների անհիդրիդները և առաջանում են մոնոսախարիդներից ջրի աարենը խելուց: Բոլոր պոլիսախարիդների հատկությունը հիդրոլիզի յենթարկվելու ընդունակությունն է, այսինքն նրանք ընդունակ են քայլացնելու ջրի ազգեցության տակ և ջրի հետ միանալով: Այդ հիդրոլիզը կատարվում է նոորացրած հանքային թթուների կամ համապատասխան ֆերմենտների միջոցով:

Հիգրոլիտիկ տրոհման (ճեղքման) հետևանքով պոլիսախարիդ-ները վերածվում են իրենց յելանյութ-մոնոսախարիդների:

Հիգրոլիտիկ պրոցեսները նուրացրած հանքային թթուների աղ-դեցության տակ միատեսակ ինտենսիվությամբ չեն ընթանում բուրը պոլիսախարիդների մոտ: Այսպիս, որինակ, մոնոսախարիդների յերկու մոլեկուլների մասցը դնելից կազմված պոլիսախարիդները, կամ, ինչպես դրանք կոչվում են, դիսախարիդները (դրանց թվին են պատկանում յեղեղնաշաշքարը, կաթնաշաքարը, գարեշաքարը), հեշտությամբ են հիգրոլիտիկ յենթարկվում: Տիպիկ պոլիսախարիդներից, վորոնք բաղկացած են մոնոսախարիդի մեծ թվով մոլեկուլներից, հեշտությամբ են հիգրոլիտիկ յենթարկվում, որինակ ուղան, մինչդեռ յուս տիպիկ պոլիսախարիդ թաղանթանյութը դժվարությամբ և հիգրոլիտիկ յենթարկվում, թեև և այն կարելի է վերջի վերջությունիկ կերպով վերածել յելամոնոսախարիդ-գլուկոզայի, վորը, ինչպես և բուրը մոնոսախարիդները, հանդիսանում են ջրի մեջ լուծվող անգույն բյուրեղային նյութ:

Թաղանթանյութի ֆորմուլան ե (C₆H₁₀O₅) ո, վորտեղ ո մեծությունը գենես չի սահմանված. մաքուր թաղանթանյութը հանդիսանում ե միանգամայն ամուր մի միացություն, վորը քիչ և փոփոխվում: Թաղանթանյութը ջրի մեջ չի լուծվում. թունդ հիմքերի աղջեցությամբ թաղանթանյութը միայն ուղղում է: Ցեթերը, ալիսոլը, բենզինը և այլ սովորական լուծիչները թաղանթանյութը բուրութին չեն լուծում:

Բուսական կերերի մեջ սովորաբար թաղանթանյութին ուղեկցում են մի շարք զանազան նյութեր—պեկտինային նյութեր (պոլիսախարիդներ են, ունեն թթվային բնույթ), հեմիցելուոգներ (համախի հանդիսանում են պենսաողներից, յերբեմն ել հեկսողներից առաջացներ), հիգրոլիտիկ յենթարկվում ուղարկից ավելի դժվար և թաղանթանյութից ավելի հեշտ), լիգնին (նոսր թթուների աղջեցությանը դիմադրում ե, ոքսիլացնողներից քայլայգում ե, ավելի հարուստ ե ածխածնով, քան թաղանթանյութը, պարունակում ե մետօքսիլ խումբ—O—CH₃) և ուրիշ նյութեր:

«Հում» թաղանթանյութի վարոշումը կատարվում ե ալսպիստազոտվող նյութի վրա սկզբում ազդում են թույլ ծծմբական թթվով, ապա կծու կալիումի թուցլ լուծույթով: Այդ ժամանակ տեղի լի ունենում հետեւյալը. թույլ ծծմբական թթուն յեռացնելիս առաջացնում ե հիգրոլիտիկ ապա լուծում՝ ուղան և հեմիցելուոգի մի մասը, վերածելով լրանք մոնոսախարիդների. թույլ թթվի աղջեցությամբ թաղանթանյութը հիգրոլիտիկ չի լինենթարկվում և հետևաբար նա չի ել լուծվում:

Այնուհետև ծծմբական թթուն լուծում և ամիսները, ամիսները, ալիքարդիքները, մասամբ լուծում և նաև հանքային նյութերը և այլն ենու հրմքը լուծում և սպիտակուցը, լիգնինի մի մասը, ֆիացած հեմիցելոգների գգալի մասը և սապնացնում և ճարպը:

Լվացված չլուծված մնացորդը փոխադրում են կշռված բացարձակ չոր ֆիլտրի վրա, լվանում են ջրով, ալկոհոլով և յեթերով, ապա չորացնում են և փորոշում «հում» թաղանթանյութի կշիռը: Այդ թաղանթանյութը «հում» կկոչվի նրա համար, վոր նրա մեջ բացի բուն թաղանթանյութից՝ կդանվին լիգնինի մի մասը, հեմիցելուզների մի մասը և մի քանի ուրիշ նյութերը: «Հում» թաղանթանյութի սոկոսային քանակը՝ վերհաշված բացարձակ-չոր նյութի նկատմամբ, իբրև որինակ, կարելի յե ահանել հետեւալ թվերից.

Տախտակ 5

Կերերի անունը	Քաղաքական թաղանթանյութի մասը	Կերերի անունը	Քաղաքական թաղանթանյութի մասը
Մարդագետնի խոտ	35,72	Շաղկամ	11,78
Ճահճային	30,55	Վարոսկ	12,08
Ցերեքնուկի	34,39	Շվեդական վարսակ	11,45
Ցորենի ծղոտ	44,81	Ցորենի թեփ	11,80
Ցորենի մղեղ	34,18	Սրբածաղկի քուսպ	12,70

Անորներ յեկ գործիքներ

1. Բաժակ—600—750 խ. սմ. տարողությամբ:
2. Յեռոտանի ասրեստե ցանցի հետ:
3. Ծծող ապարատ (նկ. 13), վորը բաղկացած և տանձանման ծծիցից և հաստապատ կոնաձև կոլբայից իր խցանի և խողովակների հետ կոլբան միացվում և ջրային պոմպի (նասոսի) հետ:
4. Լվացաշիշ թորած տաք ջրով:
5. Պինցիտ:
6. Վոչ մեծ ապակյա ձագար և Եռենմելերի կոլբա 500—600 խ. սմ. տարողությամբ:
7. Չորացնելու բաժակ:
8. Չորացնող պահարան:
9. Մետաղյա ունելու:
10. Եքսիկատոր:

1. Ծծմբաթթվի լուծույթ ($1,25\%$):


2. Կծու կալիումի 5% անի լուծույթ, վորը պետք եւ պատրաստել այսպես. կշռում են վորոց քանակությամբ կծու կալիում, միքիչ ավելի, քան անհրաժեշտ և հաշիվների համաձայն, Ալյուունիտեհիմքը լուծույթ են և տիտարած ծծմբական թթվով վորոշում լուծույթի մեջ յեղած կծու կալիումի քանակը. Դրանից հետո լցնում են ջուր մինչև անհրաժեշտ ծագալն ստացվելը:

3. Ետիլ (ծծմբային), յեթիր:

4. Գինեալկոհոլ:

ՎՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՅՔՔԸ

1. Փորձանոթի մեջ տեղափորել հետազոտվող՝ ոդաչոր նյութից մոտ 2—3 գ. և անալիտիկ կշռություն կշռություն կուղանոթը նյութի հետ միասին:



Նկ. 13

2. Փորձանոթի պարունակությունը դատարկել 600—750 լս. սմ. տարողություն ունեցող բաժակի մեջ:

3. Կշռել դատարկված փորձանոթը և փորձանոթի ու նյութի և դատարկ փորձանոթի կշռությի տարրերությամբ վորոշել բաժակի մեջ գտնվող փորձանոթի կշռությի կշռութը¹⁾:

4. Բաժակի մեջ լցնել 200 լս. սմ. նոսրացրած ծծմբական թթու ($1,25\%$) և բաժակի վրա նշան անել հեղուկի մակարդակը՝ թուղթ կպցնելով:

5. Հեղուկը բաժակի մեջ տաքացնել մինչև յեռալը, պարունակությունը խառնելով ապակյա ձողով:

6. Զգուշությամբ յեռացնել բաժակի պարունակությունը ուզիդ 30 լուսի. Յեռացնելիս ժամանակ առժամանակ բաժակի մեջ լվացաշից լցնել տաք թորած ջուր, ամրող ժամանակ հետեւելով, վոր

1) Այն դեպքերում, յերբ նյութը պարունակում է 8 և ավելի բարձր տոկոս ճաղար, կշռանյութը պետք է ճարպագուրկ անել յեթերութիւնում:

հեղուկի մակարդակը բաժակի մեջ չի ջնի, այսինքն ծծմբական թթվի կոնցենտրացիան բաժակի մեջ չմեծանաւ, Հակառակ դեպքում կարող ե սկսել «հում» թաղանթան յութի մասնակի հիգրոլիզ և վորոշումը ճիշտ չի լինի:

7. Ֆիլտրի թղթից կտրել մի կլորակ ծծմբակի արամագծին հավասար, թրջել և ամուր կպցնել ծծմբին, գործի դնելով ջրային պոմպը, վորը միացած և ծծող ապարատի հետ:

8. Դուրս ծծել դեռևս տաք հեղուկը բաժակի միջից, Ծծիչը խոր կերպով բաժակի մեջ չսուզել և չաշխատել ամբողջ հեղուկը դուրս ծծել:

9. Ծծիչը ֆիլտրի հետ շուր տալ դեպի վեր, նախապես հանելով բաժակի միջից, և ապա ծծիչի միջից ամբողջ հեղուկը թափել ծծելու համար ծառայող կոնաձև հաստապատ կոլբայի մեջ:

10. Փակել ջրային պոմպը:

11. Տաք թորած ջրի ուժեղ հոսանքով լվանալ հետազոտվող նյութից ֆիլտրին կպած մասնիկները և հավաքել բաժակի մեջ: Լվանալու ժամանակ ոգտվել պինցետով և դրանով բռնել ֆիլտրը:

12. Ծծիչ ձագարին կպցնել նոր ֆիլտր, իսկ լվացած հին ֆիլտրը դեն գցել:

13. Բաժակի մեջ լցնել տաք թորած ջուր (200 խ. սմ.), խառնել ապակյա ձողով, թողնել, վոր նստագծքը նստի:

14. Նորից դուրս ծծել բաժակի հեղուկը:

15. Ջրով լվանալը և դուրս ծծելը կրկնել ելի 2—3 անգամ, մինչև վոր բաժակից լրիվ կերպով հեռանա ծծմբական թթուն (փորձել լակմուսի թղթով): Ամեն անգամ պեսք և ոգտագործել նոր ֆիլտր: Վերջին դուրս ծծելը կատարել ափելի խնամքով, այսինքն ձգտել բաժակից ափելի շատ հեղուկ հեռացնել:

16. Հետազոտվող նյութը պարունակող բաժակի մեջ լցնել 50 խ. սմ. կծու կալիումի 5 տոկոսանի լուծույթ և ավելացնել տաք ջուր մինչև նշան արած տեղը (200 խ. սմ.):

17. Բաժակն իր պարունակության հետ տաքացնել մինչև լեռաց, խառնելով ապակյա ձողով:

18. Յեռացնել ուղիղ 30 ըոպե, և գոլորշիանալուն զուգընթաց ավելացնել ջուր, հետեւելով վոր հեղուկի մակարդակը չի ջնի բաժակի վրա նշան արած տեղից:

19. Թողնել, վոր հեղուկը նստի:

20. Դուրս ծծել հեղուկը և լվանալ, մինչև վոր անհետանան հիմքը հետքերը (փորձել լակմուսի թղթով):

21. Սոլորական, վոչ մեծ տրամագծով ֆիլտր դնել չորացման բաժակի մեջ և չորացնել 100—105°-ի ջերմության տակ մինչև կա-

յուն կշիռը: Դրա համար չորացման բաժակն առանց կափարիչով փակելու կափարիչի և Փիլտրի հետ տեղափորել չորացման պահարանի մեջ: Բաժակը Փիլտրի հետ միասին հանել և կափարիչը փակելով, նախ դնել եքսիկատորի մեջ 20—30 րոպէ՝ պաղելու համար, ապա կշռել:

22. Վորոշել բացարձակ-չոր Փիլտրի կշռը չորացման բաժակի և նրա կափարիչի կշռի հետ միասին:

23. Չորացման բաժակից հանել բացարձակ-չոր Փիլտրը և հագցնել ձագարի վրա:

24. Ֆիլտրի վրա հագաքել ծծմբական թթվի լուծույթով և հիմքի լուծույթով մշակելուց հետո բաժակի մեջ մնացած նյութը, վորը խնամքով բաժակից տաք ջրով լվանալով պետք և շուռ տալ Փիլտրի վրա:

25. Ֆիլտրի վրա հագաքված նստվածքը լվանալ յերկու անգամ տաք ջրով, ապա յերկու անգամ՝ ալկոհոլով և, վերջապես, յերկու անգամ յեթերով¹⁾:

26. Զգուշությամբ փաթաթել Փիլտրը լվացված նստվածքի հետ, տեղափորել չորացման բաժակի մեջ, չորացնել սկզբում կես ժամ՝ ոդի մեջ կրակից հեռու, ապա Փիլտրը նստվածքի հետ չորացնել 100—105° ջերմության տակ մինչև կայուն կշռը: Դրա համար, առանց բաժակի կափարիչը փակելու բաժակը կափարիչի, Փիլտրի և նստվածքի հետ դնել չորացնող պահարանի մեջ: Դրանից հետո կշռել բաժակն իր պարունակության հետ՝ կափարիչը փակելով, կշռելուց մեջ՝ պաղելու համար:

27. Վորոշել բացարձակ-չոր Փիլտրի, նստվածքի և չորացման բաժակի ու իր կափարիչի կշռը:

28. Վորոշել «հում» թաղանթանյութի կշռը¹⁾, հանելով բացարձակ-չոր Փիլտրի, նստվածքի և չորացման բաժակի ու իր կափարիչի ընդհանուր կշռից բացարձակ-չոր Փիլտրի և չորացնող բաժակի ու իր կափարիչի ընդհանուր կշռը:

29. Հաշվով գուրս բերել «հում» թաղանթանյութի տոկոսը, ա—«հում» թաղանթանյութի կշռը, բ—հետազոտվող ոդաչոր նյութի կշռամասը.

$$x = \frac{100 \cdot a}{b},$$

վորտեղ x —«հում» թաղանթանյութի տոկոսը, a —«հում» թաղանթանյութի կշռը, b —հետազոտվող ոդաչոր նյութի կշռամասը:

1) Ալկոհոլն ու յեթերը լուծում են խեժը, գարագարին նյութերը, ներկությունը, ճարպի մնացած մասը և մի քանի այլ նյութերը,

30. Համեմատել ստացված տոկոսային քանակը դուգահեռ վուրովող կշռանյութի տոկոսի հետ: Ցերկու զուգահեռ վորոշումների տոկոսների 0,3 տարրերությունը սովորաբար թույլատրելի յեն համարվում:

31. Բացարձակ-չոր նյութի նկատմամբ վերհաշվելու համար որդաչոր նյութի մեջ յեղող «հում» թաղանթանյութի տոկոսը ցուց տվող թիվը պետք է բազմապատկել 100-ով և բաժանել 100-ի և տվյալ կերի հիգրոսկոպիկ ջրի տոկոսի տարրերության վրա:

Ի վերջո կստանանք «հում» թաղանթանյութի տոկոսը կերի բացարձակ-չոր նյութի մեջ:



ՊԵՆՏՈԶԱՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

$C_6H_{10}O_5$ ֆորմուլան ունեցող ածխաջրատները կոչվում են պենտոզներ, գեհիդրատացած պենտոզները կոչվում են պենտոզաններ և ունեն ($C_5H_8O_4$) ո ֆորմուլան, Այսպիսով պենտոզանները պենտոզների նկատմամբ նույն հարաբերության մեջ են, ինչպես ուսանույունների: Պենտոզների $C_5H_9CH_3O_5$ ֆորմուլան ունեցող հոմոլոգները կոչվում են մետիլպենտոզներ:


Պենտոզներից ամենից ավելի հայտնի յեն արաբինոզը և քսիլոզը, փորոնց համապատասխանում են արաբան և քսիլան պենտուանները, Մետիլպենտոզներից ամենից ավելի հայտնի յեն ուսմնոզը, ավելի թույլ են ուսումնասիրված փուկոզը և խինովոզը:

Պենտոզանները կերերի մեջ պատահում են բավականին զգալի քանակով և ունեն վորոշ սննդարժեք, ուստի և նրանց քանակական փորոշումը հանդիսանում է շատ կարեւոր խնդիր այս կամ այն կերեսննարարությունն ավելի խոր կերպով գնահատելու դեպքում:

Պենտոզանները նոսրացրած թթուների հետ տաքացնելիս սկըրբում վերածվում են համապատասխան պենտոզների, իսկ այնուհետեւ վերջինները դառնում են փուրֆուրոլ (պիրուրգնային թթվի ալենիդիդ).




Մետիլպենտողանները համապատասխանողեն կազմում են մետիլ-
ֆոռոֆոռոլ.



Վերոհիշյալ ռեակցիաների վրա ել հիմնվում ե պենտողանների
քանակական վորոշումը:

Դրա համար պենտողաններից ստանում են ֆոռոֆոռոլ, իսկ հետո
վերջինը միացնում են ֆլորոգլյուցինի հետ:

Ֆոռոֆոռոլի և ֆլորոգլյուցինի փոխադրեցման հետևանքով ըս-
տացվում ե ֆոռոֆոռոլֆլորոգլյուցինի վուր:



Ֆոռոֆոռոլֆլորոգլյուցինի քանակով հատուկ տախտակի ողնու-
թյամբ գտնում են պենտողանների քանակը:

Պենտողանների վորոշման նկարագրված մեթոդը բավականին
պարզ ե և տարածված, սակայն այս լեզանակով ստացված անալիզի
արդյունքներին պետք ե տալ պայմանական նշանակություն և
զրանք շատ ճիշտ չհամարել:

Ներքոհիշյալ տախտակը կարող է գաղափար տալ բույսերի մեջ
յեղած պենտողանների քանակի մասին, ընդունելով, վոր արար սննն ու-
քսիլանը պատահում են միասին (Տոլենս և Դյունաեր):


Տախտակ 6

Կերի անունը	Պենտողանների տո- կուային քանակը
Մարգագետնի խոտ	16,1
Վոլոսի ծղոտ	14,9
Ցերեքնուկի խոտ	8,70

Անորմեր յևի գործիքներ

Ա. Հատուկ ապարատ (նկ. 14) պենտողանների վորոշման համար: Ապարատը
առվարաբար սարքվում ե միաժամանակ չորս փորոշում կատարելու համար և բաղկա-
ցած ե հետեւյալ ժամանակը. 300—400 լր. սր. տարողությունը կողմայից, բաժանարար
ձևադրից 30 և 60 սմ³ բաժանմունքներով, և սառնարանից:

2. Վորպես ընդունարան ծառայում են գլանների (կոլբաների թվի համաձայն)՝
30, 60, 90 սմ³ նշումներով, բաժակներ 409 սմ³ նշանով, ձագարներ և սովորական
կոլբաներ ֆիլտրելու համար:



Նկ. 14

3. Զորացման պահարան
4. Զորացման բաժակներ,
5. Մետաղյա ունելիք
6. Եքսիկատոր:
7. Լվացաշիշ—թորած ջրով:

ՈՒԽԱԿՏԻՎՈՒՅԹ

1. 12%—անի աղաթթու (տես. կշիռը 1,06),
2. Քացախաթթվային անիլին, մետակտիվը պատրաստվում և սառցային քացախաթթվի և անիլինի հակասար ծավալների խառնուրդից; Նա պետք է լինի թարմ պատրաստած,
3. Ֆլորոդիլուցին—C₆H₅(OH)₃—սիմետրիլի տրիոքսիբենզոլ:

ՎՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. Անալիտիկ կշեռքով աղաթատի կոլբալի մեջ կշռել հետազոտվող ողաչոր նյութից 2—5 գ.
2. Կոլբայի պարունակութիւնը վրա լիցնել 100 լս. սմ. 12 տուկուանի աղաթի թուր:
3. Կոլբան միացնել աղաթատին:
4. Սառնարանի աղաթ ծայրին դնել չափածու դլան:

5. Գործի գնել սառնարանը:

6. Ապարատի կոլբան ցանցի վրա տաքացնել մինչև վոր նրա պարունակությունը թույլ կերպով լինա:

7. Ծորակ ունեցող ձագարով կոլբայի մեջ լցնել ելի 30 խ. սմ.

12 տոկոսանի աղաթթու, հենց վոր 30 խ. սմ. հեղուկ կթորվի,

Աղաթթու ավելացնել աստիճանաբար, վորպեսզի հեղուկը կուրայի մեջ ամբողջ ժամանակ շարունակի լինալ:

13. Կոլբան իր պարունակության հետ տաքացնել կրակի վրա (ողաքաշ պահարանում) սկզբում շատ զգուշությամբ, ըսկ հետո ավելի ուժեղ, մինչև վոր հեղուկը միանգամայն պարզվի, զարզվելուց հետո տաքացնել ելի 1-2 ժամ: Ամբողջ ժամանակ պետք եւ տաքացնել վոչ շատ ուժեղ, վորպեսպի (NH_4)₂ SO_4 -ը ցնելով չկորչի: Դրա համար ել խորհուրդ եւ տրվում հետևել, վորպեսպի կոլբայի վզի վերեի մասն ամբողջ ժամանակ տաք չլինի և յեռալը շատ մեղմ ընթանա:

14. Թողնել, վոր կոլբան պաղի, հանգցնելով ալորցը:

15. Շատ զգուշությամբ պատի վրայով կոլբայի մեջ լցնել քիչ քանակությամբ թորած ջուր:

1) Նորատակահարմար կիներ այնուհետեւ կոլբան ժամկել թույլ կերպով ապակյա խցանով կամ փոքր ձագալով:



Նկ. 18

16. Կոլբայի պարունակությունը դատարկել (զգուշությամբ) ուրիշ հատուկ թորման կոլբայի մեջ¹⁾:

17. Կոլբալի կոլբան նորից մի քանի անգամ խնամքով լվանալ քիչ քանակությամբ թորած ջրով և այդ ջուրը դատարկել թորման կոլբայի մեջ: Այդ գործողության համար կարելի է խորհուրդ տալ ոգտագործել նկ. 18-ում նկարագրված պրիբուր:

18. Եռևենմեյերի կոլբայի մեջ (վորն իրեն ընդունարան և ծառայում) լցնել ճիշտ 50 լի. սմ. (կարելի է և ավելի, բայց վորոշ քանակով)^{1/10} նորմ. ծծմբական թթու: Ընդհանրապես ասած, այնքան ծծմբական թթու չեն ավելացնում, վոր նա քիչ գերակշռի թթվի այն քանակը, վոր պահանջվում ե թորովող ամոնիակը կապելու համար: Սովորաբար 50 լի. սմ.^{1/10} նորմալ ծծմբակթթուն բավական ե լինում:

19. Թորման համար հավաքել կոլբալի հատուկ ապարատը և գործի դնել սառնաբանը:

Հետեւ, վոր կոլբալի ապարատի թորման խողովակի ծալը խորասուզված լինի շափած^{1/10} նորմ. ծծմբական թթվի մեջ:

20. Մեծ զգուշությամբ պատերի վրալով թորման կոլբայի մեջ լցնել 80—100 լի. սմ. NaOH-ի (33%) լուծուց²⁾: Հիմք ավելացնելու պետք ե աշխատել, վոր չթափվի կոլբայի վզի վերին (ներսից) մասի վրա, վորտեղ հետո պետք ե խցան հագցվի: Յեթե այդ տեղում հիմք չի լինի, խցանը լավ կկպչի կոլբայի բերանին և աշխատանքի ժամանակ դուրս չի թռչի: Այսուհետև կոլբայի մեջ պետք ե դցել մի քիչ պեմզա (համաշափ յեռալու համար) և այրելու ժամանակ իրեն կատալիզատոր սնդիկ գործադրելու դեպքում դանակի ծայրով հենց պահանձան պեմզա մեջ դցել ցինկի փոշի (աղատելու համար ամոնիակը, վոր այդ կոլբայի մեջ դցել ցինկի փոշի (աղատելու համար ամոնիակը, վոր կաված և սնդիկի հետ իրեն ամիսու-սնդիկացին միացություն):

21. Արագ և միաժամանակ դուրս կոլբան միացնել կոլբալի թորման ապարատի հետ և ապա թեթև կերպով թափահարել կոլբայի պարունակությունը:

22. Վառել այրոցը և ջրային գոլորշիների հետ³⁾ ամբողջ ամունիակը թորիկ եռելնմելերի ընդունման կոլբայի մեջ, վորը պարունակում և վորոշ հայտնի քանակություն^{1/10} նորմ. ծծմբական թթու:

1) Յեթե կան 800 լի. սմ. տարողության կոլբաներ այրման համար, այդ չեպքում թորումը կարելի յե կատարել այդ կոլբաներում՝ առանց նյութը հատուկ թորման կոլբայի մեջ տեղափոխելու, վորը շատ հարմար ե պակեցնում և ազում կորուսը:

2) NaOH-ն այդ յեղանակով լցնելիս NH₃-ի կորուստ չի լինում, վորովհետեւ կոլբայի մեջ յեղանակով կերին շերտը ակացիայի պատճենում, նա չի ցնդում

23. Հենց վոր ամբողջ ամոնիակը կթորվի (թորվածքի մեկ կաթիլից կարմիր լակմուսի թուղթը չպետք է կապտի), պետք և հանել եռկանմեյերի ընդունման կոլբան, կերպի ապարատի թորման խողովակի ծայրը լվանալ թորած ջրով, լվացաջուրը լցնելով ընդունման կոլբայի մեջ, հանգնել այրոցը և փակել սառնարանը:

24. Ընդունման կոլբայի պարունակությունը տիտրել $\frac{1}{10}$ նորմալ բարիտով մետիլորանժ ինդիկատորի, կամ սողոլաթթվի կամ մետիլուստի ներկայությամբ, բայց վոչ ֆենոլֆտալինի:

25. $\frac{1}{10}$ նորմ. H_2SO_4 -ի խ. սմ. քանակից, վոր նախապես լցված եռկանմեյերի կոլբայի մեջ, հանել $\frac{1}{10}$ նորմ. բարիտի խ. սմ. քանակը, կստացվի $\frac{1}{10}$ նորմ. H_2SO_4 -ի խ. սմ. այն քանակը, վորը չեղա-

քացված և ամոնիակով:

26. Ամոնիակով չեղաքացված $\frac{1}{10}$ նորմ. H_2SO_4 -ի խ. սմ. քանակը բազմապատկել $0,0014\text{-ով}$, կստացվի աղոտի գրամների քանակը

27. Հաշվով դուրս բերել աղոտի տոկոսային քանակը ողաչոր կշռանյութի մեջ:

$$x = \frac{100 \cdot a}{b},$$

վորտեղ x —աղոտի տոկոսը, a —աղոտի կշռանը, b —հետազոտվող նյութի կշռանը ողաչոր վիճակում:

28. Ստացված տոկոսը համեմատել զուգահեռ վորոշման տոկոսի հետ: Յերկու զուգահեռ վորոշումների տոկոսների $0,07$ տարբերությունը սովորաբար թուլատրելի յե համարվում:

29. Յերկու ստացված թվերից դուրս բերել միջինը և այդ ընդունել աղոտի վերջնական տոկոսը ողաչոր կշռանյութի մեջ:

30. Ողաչոր նյութի աղոտի տոկոսը բազմապատկել $6,25$ գործակցով, կստացվի սպիտակուցի տոկոսը ողաչոր նյութի մեջ¹⁾:

1) Տարբեր կերերի մեջ գտնվում են տարբեր չափով աղոտ պարունակող սպիտակուցային նյութեր: Եթե ընդունենք, ինչպես այդ սովորաբար նույն վոր կերի սպիտակուցային նյութերի մեջ աղոտը $100/0$ ե, արդ գեպքում աղոտի գտնված քանակը պետք է բազմապատկել $6,25\text{-ով} \left[\frac{100}{16} \right]$, Սակայն աղերի ճիշտ կիրարի, սպիտակուցային և ընդհանուր աղոտը (այս հետո) սպիտակուցը վերածել աղոտի բազմապատկելով $5,7\text{-ով}$ ցորենի, աշորայի, վարսակի, վոլոսի, բակլայի և վիկի սերմերի անալիզի ժամանակ. $5,66\text{-ով}$ լուսպինի, Յակիպինի, կտագիտի, կանեփի, բամբակենու, արևածաղիկ, ողումի, գերչակի, $5,5\text{-ով}$, շի սերմերի անալիզի գեպքում, մնացած բուսական նյութերի համար ողաչործում է $6,25$ գործակիցը:

31. Քացարձակէ-չոր նյութի նկատմամբ վերահաշվելու համար ողաչոր նյութի մեջ յեղած սպիտակուցի տոկոսն արտահայտող թիվը բաղմապատկել 100-ով և բաժանել 100-ի և ավյալ կերի հիգրոսկոպիկ ջրի տոկոսի տարբերության վրա։ Կստանանք սպիտակուցի տոկոսը կերի բացարձակէ-չոր նյութի մեջ։

ՀՈՒՄ ՊՐՈՑԵԲԻՆԻ ՎՐՈՌԾՈԽԸ

Զոստելնիկայի պրակտիկայում կերի սննդաբժեքը պարզելու համար չերբեմն վորոշում են այսպես կոչված «հում» պրոտեինի քանակը։

«Հում» պրոտեինի վորոշումը հիմնված ե ըստ կելլալի ազոտի քանակը վորոշելու (տես սպիտակուցների վորոշումը) վրա, ընդ վորոշում սպիտակուցային ազոտը վոչ սպիտակուցային ազոտից չեն առաջատում, այլ վորոշում են ամբողջ ազոտի քանակը միասին։ Ազոտի ստացված քանակությունը (սպիտակուցային և վոչ սպիտակուցային) բաղմապատկում են 6,25-ով և ստանում «հում» պրոտեինի քանակը (հաշվելով, զոր «հում» պրոտեինի մեջ գտնվում և 16% ազոտ)։

Հում պրոտեինի 0% քանակը՝ վերհաշված բացարձակէ-չոր նյութի մեջ, կարելի յե, իբրև որինակ, տեսնել հետեւյալ թվերից։

Տախտակ 11

Կերերի անունը	Կերերի անունը	Վարդագետնի խոտ	Շաղկամ 17,63
Ճահճային	Ճահճային	9,43	10,38
Ճահճային	Ճահճային	9,78	13,71
Յերեքնուկի	Յերեքնուկի	20,70	19,27
Յորենի ծղոտ	Յորենի ծղոտ	3,31	39,44
Յորենի մղեղ	Յորենի մղեղ	7,54	

Անորներ յեւ զործիցներ

1. Յերկար փորձանով:
2. Եսլենմեյերի կուլես 500 լր. սմ. տարողությամբ;
3. Կելլալի ապարատ՝ այրելու համար (հատուկ կոլայով, նկ. 16);
4. Կելլալի ապարատ՝ ամիսկի թորման համար (նկ. 17);
5. Կաթիւչափ՝ սնդիկը չափելու համար։

1. Քիմիապես կոնցեսըիկ ծծմբական թթու (տես. կշ. 1,84):
2. Սնդիկ կամ քլորապես մաքուր պղնձարջասով:
3. Մաքուր պարագին:
4. 1/10 նորմ. ծծմբական թթու:
5. Կծու նատրիումի 33% յեռացրած լուծույթ (զդայշ2):
6. Ցիսկի փոշի:
7. Կողիտ չառած պեմզա:
8. Բարիտի 1/10 նորմ. լուծույթ:
9. Մետիորանժ կամ ոռղութեալ կամ մետիորա:

ՎՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ

1. Ցերկար փորձանոթի մեջ տեղավորել հետազոտվող ոդաչոր նյութից 1 գ. և անալիտիկ կշեռքով կշռել փորձանոթը նյութի հետ միասին:

2. Փորձանոթի պարունակությունը գատարկել կելղալի կոլբայի մեջ. Դրա համար յերկար փորձանոթը նյութի հետ միասին մտցնել կեղալի կոլբայի համարյա մինչև հատակը (յեթե փորձանոթը կարճ է, այդ դեպքում այն կարելի յև պահել կառուչուկե խողովակի ողնությամբ) և նոր դատարկել նյութը կոլբայի մեջ: Հետազոտվող նյութի մասնիկները չպետք են մասն կելղալի կոլբայի վոչպատերին և վոչ ել վզին:

3. Կշռել դատարկված փորձանոթը և փորձանոթի ու նյութի ընդհանուր կշռի և դատարկ փորձանոթի կշռի տարրերությամբ գըտնել կոլբայի մեջ գտնվող նյութի կշիռը:

4. Կոլբայի մեջ դանվող նյութի վրա ալիւացնել 20 լի. ամ. կոնցենտրիկ ծծմբական թթու:

5. Կոլբայի մեջ ագելացնել մի կաթիլ սնդիկ և այլն. հետազավորության ամբողջ ընթացքը նման ե սպիտակուցի վորոշմանը (տես եջ 52) ¹⁾:

ԱՆՈԶՈՏ ԵՐԱՏՐԱԿՑԱՑԻՒՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Անազոտ եքստրակտային նյութեր անվան տակ նկատի ունեն բոլոր անազոտ նյութերը՝ բացառությամբ ջրի, «հում» մոխրի, «հում» ճարպի և «հում» թաղանթան նյութի: Անազոտ եքստրակտային նյութերը վորոշում են տարրերությամբ, կերի 100 մասից հանելով հիգրոսկոպիկ ջրի, «հում» մոխրի, «հում» պղնձակուցի վորոշմանը:

1) Ընդհանուր ազոտի վորոշման գեպքում յերկու զուգահեռ վորոշումների 0,06 տարբերությունը սովորաբար թույլատրվելի յև համարվում:

«հում» թաղանթանյութի տոկուները ողաչոր վիճակում: Մնացորդը կլինի անազոտ եքստրակտային նյութերի տոկոսը ողաչոր նյութի մեջ, Արսպիսով անազոտ եքստրակտային նյութերի կազմի մեջ մըտնում են՝ ուլա, հեմիցելուլոզների մի մասը, շաքարները և մի քանի ուրիշ միացություններ:

Կերի բացարձակ-չոր նյութի մեջ գտնվող անազոտ եքստրակտային նյութերի տոկոսը գտնելու համար անհրաժեշտ և ողաչոր նյութի մեջ գտնվող անազոտ եքստրակտային նյութերի տոկոսը բազմապատկել 100-ով և բաժանել 100-ի և տվյալ կերի հիգրոսկոպիկ ջրի տոկոսի տարբերության վրա:

Հետեւյալ տախտակում բերում ենք, իրեն որինակ, անազոտ եքստրակտային նյութերի տոկոսաւին քանակը՝ վերհաշված բացարձակ-չոր նյութի մեջ:

Տախտակ 12

Կերերի անունը	Անազոտ եքստրակտային նյութերի տոկոսը	Կերերի անունը	Անազոտ եքստրակտային նյութերի տոկոսը
Սարկադետնի լոստ	44,58	Շաղգամ	57,68
Ճանձային	51,62	Վարսակ	69,30
Ցերեքնուկի	34,04	Շվեդական վարսակ	66,11
Ցորենի ծղոտ	44,48	Ցորենի թեփ	56,59
Ցորենի մղեղ	44,30	Արևածաղկե քուսպ	25,49

Վ.09—ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ ԱԶՈՏԱՑԵԼԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ 0.90ՏԸ Վ.0ԲՈՇԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՄՈՒԶ ՊԱՏՐՈՍԵԼԻ

Վոչ սպիտակուցային միացությունների ազոտի քանակը կարելի յէ ստանալ ընդհանուր ազոտի քանակից սպիտակուցային ազոտի քանակը գուրս գալով, կերի ազոտային վոչ սպիտակուցային մասն ավելի լրիվ հետազոտելու դեպքում (վորը սակայն զոտեխնիկական անալիզի լայն պրակտիկայում համեմատաբար հազվագեղ և կատարվում), սովորաբար առանձին վորոշում են ամոնիակի ազոտը, ամիգների ազոտը և ամինոթթուների ազոտը¹⁾:

1) Կերերի մեջ հիգրատային ազոտի քանակը հաճախ անհան և լինում: Մակայն մի շարք դեպքերում (որինակ՝ ճակնդեղի մեջ ուժեղ ազոտային պարագաց-

Այդ նպատակով հետազոտվող նյութից պատրաստվում ե ջրա
ալկոհօլային կամ ջրային մուզ. Այս կամ այն մուզի պատրաստելը
չպետք ե ձգձգել վորովհետև նա հեշտությամբ քայլայվում ե և դո-
րաշումների արդյունքները ճիշտ չեն լինի:

Լսու կելնարի ջրա-ալկոհօլային մուզ պատրաստվում ե այսպես.
փոշու չափ մանրացրած հետազոտվող նյութից վերցնում են 10 գ և
յեռացնում կոլբայի մեջ 300 լի. սմ. 30—40% ալկոհոլի հետ $1\frac{1}{4}$ — $1\frac{1}{2}$
ժամ, ավելացնելով մի քանի կաթի քացախաթթու և ոդտաղործելով
հակադարձ սառնարան. Այնուհետև կոլբայի պարունակությունը պա-
ղեցնում են և ապա ֆիլտրում. Զափելով ֆիլտրատի վորոշ ծավալ,
այն գոլորշիացնում են ջրային բաղնիքի վրա և ապա ստացված
մնացորդը լուծում են ջրի մեջ:

Ջրային մուզը պատրաստում են հետեւ
յալ կերպ. հետազոտվող նյութից 10 կամ
20 գ մշակում են կոլբայի մեջ յերկու ան-
գամ 100 կամ համապատասխանորեն 200 լի.
սմ. CO₂-ից ազատ թորած ջրով. միաժա-
մանակ թափահարելով: Զուրը պետք ե լի-
նի 15—20%. Այնուհետև ելի մեկ անգամ
հետազոտվող նյութը մշակում են 300 կամ
համապատասխանորեն 200 լի. սմ. տաք ջրով:

Յուրաքանչյուր անգամ լուծույթը ֆիլտրում են՝ արտածելով բյուխ-
ների ճենապակյա ծավարի միջոցով (նկ. 19). Ստացված ֆիլտրատը
կարճ ժամանակ տաքացնում են սպիտակուցի մասերից աղատվելու-
համար, ապա ֆիլտրում են, լուծույթը գոլորշիացնում են ցածր ջեր-
մաստիճանում և հասցնում վորոշ ծավալի:

Հետազոտվող լուծույթի մեջ գտնվող ամիդների ազոտի և ամի-
նոթթուների ազոտի վորոշման դեպքում սպիտակուցային նյութերը
և պեպտոնները կարող են աղղել ստացվելիք արգյունքների հշտու-
թյան վրա: Դրա համար ել զրանից խուսափելու նպատակով մուզի
միջից հեռացնում են սպիտակուցները և պեպտոնները կապարային
քացախի ոգնությամբ: Վարփում են այսպես. ամբողջ մուզը կամ
նրա վորոշ մասը տեղափորում են չափական կոլբայի մեջ, ավելաց-
նում են քիչ դարաղաթթվի լուծույթ և ապա կապարային քացախի


ման ժամանակ) հարավոր ե նիստատների զգալի կրտսակում: Նրանց վորոշումը
կատարվում է զանազան մեթոդներով: Տես, որինակ, Դեմյանով և Պրյանիշնիկով.—
«Բուսական նյութերի անալիզի ընդհանուր յեղանակները», 1933, Հենց այնուեղ ել
ան ընդհանուր ազոտի վորոշումը մեծ քանակությամբ նիստատային ազոտի ներ-
կայությամբ:

լուծույթից (հիմքավին քացախաթթվային կապար): Լուծույթը պետք է ավելացնել մինչև նստվածքի դադարելը, խուսափելով սեակտիվի աշվեցուկից: Կոլբայի պարունակությունը հասցնում են մինչև վորոշ ծավալի, խառնում են և փիլտրում ծավալի վորոշ մասը: Թիլտրատից կապարը նստեցվում է ծծմբակտն թթվի լուծույթով կամ ծծմբաջրածնով, այնուհետև փիլտրում են, չեղոքացնում և ստացված լուծույթի մեջ վորոշում են ամբողների ազոտը և ամինոթթուների ազուրը:

ԱՄՈՆԻԱԿԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ (ՀՍՏ ԼՈՆԳԻ)

Ամոնիակը սովորաբար բուսական ծագում ունեցող կերերի մեջ գտնվում է որգանական թթուների աղերի ձևով, վորտեղից այն կարելի յի դուրս գանել ծծմբական թթվի տիտրած լուծույթի մեջ, վորը հնարավորություն կտա հեշտութեամբ հաշվել ամոնիակի քանակը կերի մեջ: Ամոնիակը դուրս են վանում թույլ հիմքերի միջոցով, իսկ թորում են ցածր ճնշման և $35 - 40^{\circ}$ ջերմության տակ: Ամոնիակը վորոշելիս այդ հանգամանքները կարենը են նրա համար, վորումներ հիմքերը ամրային խմբերից կարող են անջատել ազոտը ամոնիակի ձևով, իսկ թորման ժամանակ բարձր ջերմաստիճանը վտանգավոր է, վորովհետեւ նա նույնպես կարող է նույն ձևով քայլայել:

Խողով.



Նկ. 20

Հետազոտվող կերը, վորպիսի հանգամանքը կազդի վորոշման ճշտության վրա: Այդ պատճառով ել լոնգիի յեղանակով ամոնիակի գուրսվանումը կատարվում է մագնեղիալ կամ կրային կաթով, իսկ ամոնիակի թորման գործողությունը պետք է ընթանա ցածր ճնշման տակ, վորի համար պահանջվում է հատուկ սարք մանուետը հետևյալ սարքի սիսեման յերեսում է նկ. 20-ից:

1. Մադնեզիվալ կաթ, վորը պետք և խնամքով յեռացըսած լինի, Մադնեզիվալ
իւաթը կարելի յէ փոխարինել կրակաթով:
2. Պարաֆին,
3. Սողայի 100% լուծույթ:
4. Ծծմբական թթվի $1/10$ նորմ. լուծույթ:
5. Հիմքի 1% նորմալ լուծույթ:
6. Մետիլորանժ կամ սողուաթթու:

ԱՅՐՈՇՄԱՆ ԲՆԹԱՑՔԸ

1. Սարքը հավաքել նկ. 20-ում պատկերացված սխեմայով, Սարքի ըոլոր միացվող մասերը պետք ե ունենան կառուչուկե խցաններ և հաստապատ վակուումային խողովակները, Լվացման սրվակ Ա-Ն պարունակում և ծծմբական թթու, հաստապատ Ե կոլրան պետք ե պարունակի վորոշ քանակություն (մոտ 50 լր. սմ.) գեցինորմալ ծծմբական թթու:

2. Փորձել հավաքված սարքը, Այդ նպատակով սեղմել պտուտակային սեղմիչ և և գործի գնել պոմպը, Յեթե պոմպը լավ և աշխատում և սարքը ճիշտ և հավաքված, այդ դեպքում արագությամբ առաջանում և ողի նոսրացում մինչև 20 մմ.: Այնուհետեւ պետք և անջատել պոմպը սարքից՝ վակելով Ե նախազգուշական կոլրայի մոտի ծորակը և հետեւ մանումետրին: Փակել պոմպը, Յեթե ճնշումը գանդաղ կրարձրանա, նշանակում և սարքը միանգամայն ճիշտ և հավաքված:

3. Ստուգված սարքը միացնել արտաքին միջավայրի հետ, Դրա համար շատ զգույց թուացնում են և պտուտակային ճնշիչը և ասինանաբար սարքի մեջ առաջացնում են արտաքին ճնշում: Դրանից հետո բաց անել ծորակը նախազգուշական սրվակի մոտ:

4. Կլազենի (A) կոլրայի մեջ լցնել 100 լր. սմ. պատրաստի մուզ (տես 57 եջ): Մուզը լցնել կոլրայի մեջ յերկար ձագարի միջոցով, Սրվակը, վորի մեջ գտնվում եր չափված մուզ, և ձագառը լվանալ քիչ քանակությամբ թորած ջրով, և լվացաջուրը հետո լցնել կլազենի կոլրայի մեջ:

Մուզի փոխարեն կլազենի կոլրայի մեջ կարելի յե տեղափորել հետազոտվող կերից 1—2 գ և ապա ավելացնել 100 լր. սմ. թորած ջուր:

5. Կոլրայի մեջ զցել փոքր կտոր պարաֆին (թիև վերջինն յերշարացնում և թորած գործողությունը, բայց դրա փոխարեն թու-

շացնում և փրփուրի առաջանալը թորակն ժամանակ) և լակմուսի թուղթ և վորոշել հեղուկի ռեակցիան: Թունդ թթու ռեակցիայի զետքում հեղուկն զգուշությամբ չեղոքացնել սողայի լուծույթով, մինչեւ վոր թույլ թթվային ռեակցիա ստացվի. լուծված սողան լցնել ձագըի միջոցով:

6. Նույն ձագարով լցնել կլայպենի կոլրայի մեջ մաղնեղիալ կաթ, մինչեւ վոր պարզ հիմքային ռեակցիա ստացվի:

7. Փակել (արագ) կլայպենի կոլրան կապիլարով փրիջացող և ապակյա խողովակ ունեցող խցանով և սեղմել պտուտակային սեղմիչը ա:

8. Գործի դնել սառնարան:

9. Գործի դնել պոմպը և ա պտուտակային սեղմիչով կանոնավորել կապիլարի միջով կլայպենի կոլրայի մեջ մանող ողն այնպես, վոր հնարավոր լինի հաշվել նրա բշտիկները:

10. Նուրացումը սահմանել մնացորդային ճնշման 20 մմ մոտ և հետո տաքացնել սարքի ջրային բաղնիքը մինչեւ 40° -ից վոչ բարձր, ամբողջ ժամանակ հետևելով մանումեարին:

11. Թորել մոտ 80 խ. սմ. հեղուկ:

12. Նախազգուշական կոլրայի մոտ փակել ծորակը, դագարեցնել պոմպի աշխատանքը, հանգցնել այրոցը և տաք բաղնիքն անջատել կլայպենի կոլրայից:

13. Զգուշուրյամբ հետ պտաելով ա սեղմիչը, ասինանաբար հավասարեցնել ճնշումը սարքի մեջ:

14. Փակել սառնարանը, քանդել սարքը, վողողել սառնարանի ներսը թորած ջրով և այդ ջուրը լցնել ընդունարանի մեջ:

15. Բնդունարանի հեղուկը տիտրել $\frac{1}{10}$ նորմ. հիմքով մետիլուրանժ կամ սողոլաթթու ինդիկատորի ներկայությամբ:


16. Դուրս բերել ամոնիակի քանակը, հաշվելով, վոր ամոնիակով կապված յուրաքանչյուր 1 խ. սմ. $\frac{1}{10}$ ծծմբական թթվին համապատասխանում և $0,0017$ գ (ճիշտը՝ $0,001703$) ամոնիակ. Յեթից յանկանում են վորոշել ամոնիակի ազոտի քանակությունը, այդ դեպքում սողակում են $0,0014$ գրածակցով:

Վորոշումն անհրաժեշտ է կրկնել և մոտիկ արդյունքներ ստացվելու դեպքում վերցնել միջինը:

Ա.ՄԻԴԱ.ՅԻՆ Ա.ԶՈՒՏ Վ.ԱՐԱՇՈՒՄԸ

Վորոշ բաժին (սովորաբար 100 խ. սմ.) մուզին ավելացնում են 3 խ. սմ. թունդ ծծմբական թթու կամ (վորն ավելի քիչ և խորհուրդ

տրվում) 5 լս. ամ. թունդ աղաթթու 1,19 տես. կշռով: Ստացված խառնուրդը յեռացնում են հակադարձ սառնարանին միացած կոլլայի մեջ վոչ պակաս քան 1½ ժամ, ավելի լավ եւ ավելի յերկար, մինչև յերեք ժամ: Այդ ժամանակ ամիգային խումբը քայքայվում եւ հետեւալ սխեմայի համաձայն:




Ստացված հեղուկը պաղեցնում են, չեղոքացնում $NaOH$ -ով մինչև թույլ թթվային սեակցիան: Այնուհետեւ ավելացնում են սական դիալի կաթ և վորոշում են ամոնիակն ըստ Լոնդիի¹⁾: Ամոնիակի ստացված քանակը հանդիսանում է ամիգային խմբերից ստացված ամոնիակի և մուզի մեջ մինչև վորոշման սկիզբն յեղած ամոնիակի (սովորաբար որդանական թթուների աղերի ձևով) գումարը: Ամոնիակի այդ ընդհանուր քանակից հանելով նախապիս գտնված ամոնիակի քանակը, կստանանք ամիգային խմբերից առաջացած ամոնիակի քանակը:

Ամիգային աղոտի պարունակությունը, արտահայտված ամոնիակի քանակով, կարելի է արտահայտել նաև աղոտի քանակով:
Վորոշումը պետք է կրկնել և մոտիկ տվյալներ ստացվելու դեպքում վերցնել միջին թիվը:

ԱՄԻՆ ԽՄԲԵՐԻ ԱԶՈՏԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՖՈՐՄՈԼ ՄԵԹՈԴՈՎ (ՀՍՏ ԶԵՐԵՆՍԵՆԻ)

Այսութեան հատկությունն է իրենց ամինոխմբերով միացության մեջ մտնել ֆորմալդեհիդի հետ: Դրա հետևանքով առաջանում են մետիլենամինոթթուներ՝ ամինոխմբերը չեղոք խմբերի վերածելու հետևանքով: Մետիլենամինոթթուների կարբօքսիլ խմբերը պահապահվում են ամրողությամբ և նրանց կարելի է տիտրել հիմքով: Ամինոթթուների այդ հատկության վրա յեւ հիմնվում նրանց վորոշումն ըստ Զերենսենի: Այդ գեղքում տեղի ունեցող սեակցիաները կարելի յեւ արտահայտել հետևյալ հայլասրումներով.

1) Զեղոքացումը սկզբում պետք է կատարել կծու հիմքերով և վոչ թե ուղղակի մաղնեղիալ կաթով, վորոշիհետեւ մաղներումի յոների կուտակումը ($Ca(OH)_2$ -ի անհրաժեշտ չափով լուծարում) չեղոք մաղներումային աղերից, կխանգարի



Ստացվող մետիլենամինոթթուների գերջնական չեղոքացում տեղի կունենա, յերբ լուծույթի pH կհասնի 9-ի և նույնիսկ 9,5-ի: Այդ պատճառով իրեն ինդիկատոր ավելի լավ ե գործադրել տիմոլֆատալեյին, զորը փոխում ե իր գույնը pH-ի այդ սահմանում: Սակայն կարելի յե տիտրացիայի ժամանակ իրեն ինդիկատոր զործադրել նաև ֆենոլֆտալեյին, ինչ վոր սովորաբար պրակտիկայում տեղի յի ունենում: Սակայն պետք ե հիշել, վոր ֆենոլֆտալեյնով պետք ե տիտրել մինչեւ ինտենսիվ, թունդ կարմիր գույնավորումը (pH=9,1):

Ամոնիակի, ածխաթթվի և ֆոսֆորաթթվի ներկայությունը հետազուավող լուծույթի մեջ զգարիորեն ազդում ե արգառնքների ձևատության վրա: Հետազուավող լուծույթի գույնը նույնպես ազդում է արգառնքների ճշառության վրա, խանգարելով տիտրացիան: Այդ բոլոր բացառական հանգամանքները վերացնելու համար այսպիս են վարդում:

Ամոնիակը, յեթե զգալի քանակով ե, հառացվում ե թորման միջոցով վակուումի մեջ 40°-ից վոչ բարձր ջերմաստիճանում: Ֆոսֆորական և ածխածնային թթուները վորոշ քանակությամբ քլորական բարիում ավելացնելուց հետո բարիտով նստում են չափական կուբայի մեջ, բարիտն ավելացվում ե մինչև պարզ հիմքային ռեակցիա ստացվելը: Կոլրայի պարունակությունը հասցնում են մինչև վորոշ ծալալի, այնուհետև ֆիլտրում են և ֆիլտրատի վորոշ ծավալի մեջ, վորի չեղոքությունը լակմուսով փորձած ե, վորոշում են աղոտիքանակը:

Հեղուկն անգունացնելու համար AgCl-ով նստվածք են առաջացնում: Դրա համար չափական կոլրայի մեջ գտնվող լուծույթին ավելացնում են HCl-ի լուծույթ կամ, նայած հանգամանքներին, NaOH և, այդպիսով, հետազուվող լուծույթը մոտավորապես պարունակում է $\frac{1}{10}$ նորմ. աղատ թթու: Թեթև թթվային լուծույթին խառնելով ավելացնում են 4 լս. սմ. քլորական բարիումի 24,4% լուծույթը աղատ լուծույթն ուժեղ թափահարելով, կաթիլ-կաթիլ ավելացնում են 20 լս. սմ. AgNO₃-ի 5,67% լուծույթ: Այնուհետև կոլ-

բայի պարունակությունը լրացնում են թարմ յեռացրած և պաղեցրած ջրով մինչև նշան արած տեղում և փիլտրում են չոր փիլտրի միջոցով: Ֆորմոլային տիտրումից առաջ թափանցիկ փիլտրատը չեղողացնել լակմուսի թղթի միջոցով:

Յեթե լուծույթն ազատ և ամոնիակից, ֆուֆորաթթվից ու ածխաթթվից, այլև յեթե հետազոտվող լուծույթը գունավորված չեւ, այդ դեպքում այդ լուծույթն ուղղակի, առանց մշակման ճիշտ չեղքացնում են լակմուսի ոգնությամբ և կատարում ֆորմոլային տիտրում:

Ամինոխմբերի ազոտի գորոշման ֆորմոլ մեթոդը բավականին պարզ եւ և հեշտ եւ կատարվում, սակայն այդ մեթոդով ստացվող թվերը չեն տալիս միանգամայն ճիշտ տվյալներ ամինոխմբերի ազոտի պարունակության մասին: Պրոլինը ֆորմոլի հետ տալիս և վոչ կայուն միացություն և քիչ իջեցնում ե գորոշման արդյունքները: Միարողինը, ընդհակառակը, ֆենոլ խմբի ներկայության հետեանքով տալիս ե բարձր արդյունքներ: Ամինոթթուների գուանիդին խումբը ֆորմոլի հետ չի սեակցում:

ՈՒԵԿԱԽԻՎԱՆԵՐ

1. n_D²⁰ NaOH կամ Ba(OH)₂ առանց կարբոնատի:

2. n_D²⁰ HCl առանց CO₂-ի:

3. Ֆորմոլ խառնուրդ, վորը պատրաստվում է տուանձին, մի ջարք ֆորմերի համար, այսպես. 50 լս. սմ. 30—40% ֆորմալինին ափելացնել 1 լս սմ. ֆենոլֆտառինի 0,05% ջրա-ալկոհոլային (կես առ կես) լուծույթ և ազա այնքան n/5 հիմքով ստացվիլ թույլ վարդագույն գունավորում:

ՎՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. Եռլենմելերի փոքր կոլբայի մեջ լցնել 20 լս. սմ. յեռացրած և պաղեցրած թորած ջուր և 10 լս. սմ. ֆորմոլ խառնուրդ, վորը միաժամանակ պարունակում ե ինդիկատոր: Այդ կոլբայի պարունակությունը կոլինի կոնտրոլ լուծույթ և կծառայի ֆորմալինի համեմատելու համար:

2. Եռլենմելերի նույն մեծության մեկ ուրիշ կոլբայի մեջ (տես կետ 1) լցնել 20 լս. սմ. նախապատրաստված հետազոտվող լուծույթ, վորը պարունակում ե ամինոխմբերի ազոտ, մոտավորապես 1/10 նորմալության:

3. Կոլբայի մեջ ափելացնել 10 լս. սմ. ֆորմոլ խառնուրդ:

4. Քիչ-քիչ կոլբայի մեջ ավելացնել n/5 հիմք մինչև վառ կարմիր գունավորումը:

5. Կոնտրոլ լուծույթի պարունակող կոլբայի մեջ ավելացնել մուտքորապես կեսի չափ այն ոլորտի հիմքի, վոր զնացել և փորձնական լուծույթի տիտրացման համար:

6. Կոնտրոլ լուծույթին ավելացնել ոլորտի մինչև թույլ վարդագույն գունավորում առաջանալը ($pH=8,3$), ապա ավելացնել մի կաթիլ ոլորտի հիմքի մինչեւ պարզ կարմիր գունավորումը ($pH=8,8$): Վերջապես ավելացնել կոնտրոլ լուծույթին դարձյալ 2 կաթիլ հիմք մինչեւ վառ կարմիր գունավորումը ($pH=9,1$):

7. Այնուհետև փորձնական լուծույթին ավելացնել ոլորտի մինչև թույլ վարդագույն գունավորում առաջանալը, ապա ավելացնել ոլորտի մինչեւ վառ կարմիր գունավորում առաջանալը, այսինքն կոնտրոլին նման գունավորում:

8. Հաշվել ամինոխմբերի ազոտի քանակը: Դրա համար փորձնական լուծույթի տիտրացիայի համար ծախսված հիմքի խ. սմ.՝ երից (գուրս գալով ավելացրած HCl -ի խ. սմ. քանակը) հանում են կոնտրոլ լուծույթի տիտրացիայի համար զնացած հիմքի (նույնպես գուրս գալով ավելացրած HCl -ի խ. սմ. քանակը) խ. սմ. քանակը: Վորովհետև 1 խ. սմ. $\frac{1}{5}$ նորմ. հիմքին համապատասխանում ե 2,8 մգ ազոտ, ապա բազմապատկերով հիմքի խ. սմ. քանակը 2,8-ով զբանում են ամինային ազոտի քանակը (միլիգրամներով) հետազոտվող լուծույթի մեջ:

Բացատրենք որինակով:

Կանոնական լուծույթ

Փորձնական լուծույթ

Ավելացրած հ ⁺			Ավելացրած հ ⁺		
— 1,55	լո.	սմ	— 4,15	լո.	սմ
— 1,35	»	»	— 0,65	»	»
0,20	լո.	սմ	0,20	լո.	սմ
NaOH			NaOH		
$\frac{1,35}{1,55} = 0,90$			$\frac{0,65}{4,15} = 0,15$		
HCl			HCl		
0,20			0,20		
լո. սմ. ոլորտի համար զնացել և կոնտրոլի			լո. սմ. ոլորտի համար զնացել և կոնտրոլի		
0,20			0,20		
Ծախսված և			Ծախսված և		
3,30			3,30		
$\times 2,8 = 9,24$ մգ ազոտ:			$\times 2,8 = 9,24$ մգ ազոտ:		

Վորպես ինդիկատոր տիմոլֆտալինի գործածելու գելքում այսպիս են վարվում. կոլբայի մեջ լցնում են 20 լո. սմ. չեղոքացված փորձնական լուծույթ: Նման մեկ ուրիշ կոլբայի մեջ լցնում են 20 լո. սմ. յեռացրած և պաղեցրած թորած ջուր: Յերկու կոլբայի մեջ ել ավելացնում են 15-ական լո. սմ. ֆորմոլ խառնուրդ (պատրաստվում է 50 լո. սմ. $30-40\%$ ֆորմալինին ավելացնելով 25 լո. սմ. ալկոհոլ և 5 լո. սմ. տիմոլֆտալինին $0,05\%$ ալկոհոլային լուծույթ) և ապա ավելացնում են հիմքի լուծույթ մինչեւ թույլ գունավորում առաջանալ ավելացնում են հիմքի լուծույթ մինչեւ թույլ գունավորում առաջանալ:


լր): Փորձնական լուծույթը տիտրում են ո/5 հիմքի լուծույթով մինչև թույլ կապույտ գունավորում առաջանալը: Կոնտրոլ լուծույթին ավելացնում են փորձնական լուծույթի մեջ ավելացրածի կիսի չափ հիմք: Ապա կոնտրոլ լուծույթը տիտրում են ո/5 HCl-ով մինչև թույլ կապույտ գունավորում առաջանալը: Այնուհետև կոնտրոլ լուծույթի մեջ ավելացնում են սկզբում մեկ, իսկ հետո յերկու կաթիլ ո/5 հիմք: լուծույթն ստանում է թունդ կապույտ գունավորում ($\rho\text{H}=9,45$): Վերջապես, ո/5 հիմք ավելացնելով փորձնական լուծույթը հասցնում են կոնտրոլ լուծույթի գույնին: Հաշիվները կատարվում են նույն չեղանակով, ինչ վոր ֆենոլֆտալեինը վորպես ինդիկատոր գործածելու գեպօւմ:

Ամիսովամբերի ազոտի վորոշումը Փորմոլ մեթոդով պահանջում է կատարել զուգահեռ վորոշում:

ՍԻԼՈՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԹՎՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Սիլոսների մեջ որգանական ցնդող թթուներից պատահում են,

1. Սրջնաթթու— HCOOH —հազվադեպ և քիչ քանակությամբ.
2. Քացախաթթու— CH_3COOH .
3. Պրոպինաթթու— $\text{CH}_3\text{CH}_2\text{COOH}$ —հազվադեպ և քիչ քանակությամբ.
4. Նորմալ կարագաթթու $\text{CH}_3\text{CH}_2\text{CH}_2\text{COOH}$.
5. Իդովալերիանային թթու CH_3



Ցցնդող թթուներից՝ կաթնաթթու $\text{CH}_3\text{CH}(\text{OH})\text{COOH}$.

Սիլոսի ընդհանուր թթվության վորոշումը կատարվում է տաք եքստրակցիալի յեղանակով: Սիլոսի միջից, մեկ ժամ թորած ջրի հետ տաքացնելուց հետո, գուրս բերված թթուները տիտրում են NaOH -ի $\frac{1}{10}$ նորմ. լուծույթով այնքան ժամանակ, մինչև վոր ապակյա ձողով վերցրած մի կաթիլ հնդուկը կարմիր լակմուսի թղթի վրա իր շուրջն առաջացնի պարզ նկատելի կապտավուն պսակ: Սիլոսի մեջ յեղած բոլոր թթուների քանակն արտահայտում են կշռային տոկոսներով սիլոսի կշռի հանդեպ, պայմանականորեն բոլոր թթուները վերահաշվելով կաթնաթթվի, ընդունելով, վոր 1 լս. ամ. $\frac{1}{10}$ նորմ. NaOH համապատասխանում է 0,009 գ կաթնաթթվի: Թթվության միորինակ արտահայտման այդ պայմանական յեղանակը հարմար է տարրեր սիլոսներ իրար հետ համեմատելու նպատակով, այլև միանույն սի-

լոսի թթվության տարբեր տեսակներն իրար հետ համեմատելու նպաստակով (տես հետո՝ սիլոսի ցնդող և չցնդող թթուների վորոշումը):

Անորներ յեվ զործիքներ

1. Կոնաձև կոլբա 750 լի. սմ. տարողությամբ:
2. Հակագարձ գնդավոր սառնարան կոնաձև կոլբային հարմարեցրած խցանով:
3. Ցեռոտանի ասբեստե ցանցի հետ:

Ուսակտիվներ

1. NaOH-ի $1/10$ նորմ. լուծույթ:

ՎՈՐՈՇՄԱՆ ԲՆԹԱՅՔԸ

1. 750 լի. սմ. տարողությամբ կոնաձև կոլբայի մեջ հետազոտվող սիլոսից կշռել 20 գ (նախապես սիլոսը մանր կտորների բաժանել):

2. Ավելացնել կոլբայի մեջ 200 լի. սմ. թորած ջուր:

3. Կոլբան միացնել հակագարձ սառնարանի հետ:

4. Գործի գնել սառնարանը և կոլբայի պարունակությունը տաքացնել ասբեստե ցանցի վրա մեկ ժամ:

5. Պաղեցնել կոլբան:

6. Քանդել սարքը և կոլբայի ամբողջ պարունակությունը (առանց ֆիլտրելու) տիտրել $NaOH$ -ի $1/10$ նորմ. լուծույթով այնքան ժամանակ, մինչև վոր ապակե ձողով վերցրած մի կաթիլ հեղուկը կարմիր լակմուսի թղթի վրա իր շուրջն առաջացնի պարզորոշ կապավուն պսակ:

7. Կատարել համապատասխան հաշվումներ, վորոնք պարզ կլինեն հետևյալ որինակից: Եթենթազրենք տիտրելու ժամանակ գնացել ե 40 լի. սմ. $1/10$ նորմ. $NaOH$, այդ դեպքում 20 գ սիլոսի մեջ բուրութուները կլինեն $0,009 \times 40 = 0,360$ գ, վորը առկոսով՝ արտահայտած կկազմի:


$$\frac{0,360,100}{20} = 1,8\%$$

Զուգահեռ վորոշումը պարտապիր եւ:

ՍԻԼՈՍԻ ՑՆԴՈՂ ԹԹՈՒՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Սիլոսի ցնդող թթուները սիլոսի միջից դուրս են հանում ջրի գուրզիների միջոցով: Ստացված թթովածքը տիտրում են $1/10$ նորմ.

NaOH-ով՝ նույնպես (տես սիլոսի ընդհանուր թթվության վորոշումը) լակմուսի թղթի ոգնությամբ, նմանապես և կատարում են հաշվությունը:



Նկ. 21

2. Եռէնմեջերի կոլբա—ընդունարան մեկ լիտր տարողությամբ:

Անօրներ յեվ զործիքներ

1. Սարք՝ սիլոսի ցնդող թթուները փորչելու համար (նկ. 21). Սարքը դիմավոր մասերով բաղկացած է գոլուշի առաջացնող մասից (պղնձե անոթ կամ ապակի կոլբա 1 լիտր տարողությամբ), թորման կոլբայից (եղինմերի կոլբա 250 լի. սմ. տարողությամբ) և սառնարանից:

ՈՒԽԱԿԻՏԻՎՆԵՐ

1. NaOH-ի 1_{10} նորմ. լուծույթ:

ՎՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ

1. Լցնել սարքի գոլորշի առաջացնող մասի մեջ թորած ջուրը, տարողության մոտավորապես մինչեւ $\frac{2}{3}$ մասը:

2. Սարքի կոնաձև թորման կոլբայի մեջ հետազոտվող սիլոսից կշռել 20 գ (նախապես սիլոսը մասնբացնել):

3. Կոլբայի մեջ ավելացնել 200 լի. սմ. թորած ջուր և նրա վրա նշել հեղուկի մակարդակը:

4. Խնամքով հավաքել ամբողջ սարքը և սառնարանի ծայրին տեղավորել 1 լիտր տարողություն ունեցող ընդունող կոլբան:

5. Գործի գնել սառնարանը:

6. Գոլորշի առաջացնող մասի և թորման կոլբայի տակ սպիրտայրոց վառել (տաքացնել ասրեստի ցանցի միջոցով) և 2—3 ժամվաը լընթացքում թորել ցնդող թթուները, կանոնավորելով ջրալին գոլորշու հոսանքը և կոլբայի տաքացումն այնպես, վոր հեղուկի մակարդակը սիլոս պարունակող կոլբայի մեջ չփոխվի:

Թորել այնքան ժամանակ, մինչև վոր թորվածքի կաթիլն ալլիս թթու սեղակցիա չտա. դրանից հետո թորել ելի մոտ 100 լի. սմ. հեղուկ և ապա թորումը դադարեցնել:

7. Ընդունիչ կոլբայի պարունակությունը տիտրել 1_{10} նորմ. NaOH-ով այնքան ժամանակ, մինչև վոր ապակե ձողով վերցրած մեկ կաթիլ հեղուկը կարմիր լակմուսի թղթի վրա սկսի իր շուրջը պարզությունը կապտավուն պատճեն առաջացնել:

8. Կամարել համապատասխան հաշվումներ, վորոնք պարզ կլինեն հետեւալ որինակից:

Յենթագրենք տիտրելիս գնացել ե 10 լ. սմ. $\frac{1}{10}$ նորմ. NaOH, այդ դեպքում՝ 20 գ. սիլոսի մեջ ցնդող թթուների քանակը կլինի 0,009 գ $\times 10 = 0,09$ գ, վոր տոկուներով արտահայտած կլինի.

$$\frac{0,09 \cdot 100}{20} = 0,45^{\circ}/_0$$

Զուգահեռ վորոշումը պարտադիր ե:

ՍԻԼՈՍԻ ԶՑՆԴՈՂ ԹԹՈՒՆԵՐԻ (ԿԱԹՆԱԹԹՎՈՒ) ՎՈՐՈՇՈՒՄԸ

Սիլոսի չցնդող թթուների (կաթնաթթվի) վորոշումը շատ կարևոր գործողություն ե, վորոշիետե սիլոսի մեջ կաթնաթթվի գերակշռումը ցնդող թթուների նկատմամբ հանդիսանում է սիլոսի լավուակությունը ցույց տվող նշաններից մեկը:

Ցցնդող թթուների քանակը վորոշում են կամ բոլոր թթուների և ցնդող թթուների քանակների տարրերությամբ (յենթագրենք , ուրինակ, բոլոր թթուները $1,8^{\circ}/_0$ են կազմում, ցնդողները՝ $0,45^{\circ}/_0$, այդ դեպքում չցնդող թթուների տոկոսը կլինի $1,8 - 0,45 = 1,35^{\circ}/_0$) կամ ցնդող թթուները թորելուց հետո կուրափի մեջ մնացածը տիտրելով:

Վերջին գեպքում տիտրում են $\frac{1}{10}$ նորմ. NaOH-ով այնքան ժամանակ, մինչև վոր ապակե ձողով վերցրած մեկ կաթիլ հեղուկը կարմիր լակմուսի թղթի վրա իր շուրջը կսկսի առաջացնել պարզուող կապտավուն պսակ: Այսուհետեւ ցցնդող թթուների քանակն արտահայտում են տոկոսով՝ սիլոսի կըսի նկատմամբ, բոլորը վերածելով կաթնաթթվի, հաշվելով, վոր 1 լ. սմ. $\frac{1}{10}$ նորմ. NaOH համապատասխանում ե 0,009 գ կաթնաթթվի:

Զուգահեռ վորոշումը պարտադիր ե:

ԿԵՐԵՐԻ ԱՆԱԼԻԶԻ ԹՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Կերերի ողաչոր վիճակին վերաբերող անալիզի տվյալները սովորաբար հաշվումների միջոցով կեր են ածում կերի նախնական վիճակի, այսինքն նրա լրիվ խոնավության վիճակի և կազմում կերի տախտակներ:

Կերի միջի ամբողջ ջրի տոկոսը վորոշելու համար այսպես են անում:

Չոռտեխնիկական անալիզի ժամանակ, ինչպես այդ ցույց տըրավեց համապատասխան տեղերում, կերի խոնավության քանակը սովորական է:

Վորաբեր վորոշում են յերկու անդամ. սկզբում վորոշում են այսպիս կոչված նախնական խոնավությունը (տես հջ 6), իսկ հետո հիգրոսկոպիկ խոնավությունը (տես հջ 8):

Առաջին հալացքից կարող ե թվալ, վոր ամբողջ ջրի քանակը կարելի յե վորոշել պարզապես նախնական ու հիգրոսկոպիկ խոնավության տոկոսներն իրար հետ գումարելով. սակայն այդ ճիշտ չէ լինի:

Զրի ընդհանուր քանակությունը հավասար ե նախնական խոնավության տոկոսին՝ գումարած հիգրոսկոպիկ ջրի այն քանակը, վոր գտնվում ե 100 մաս նախնական խոնավություն ունեցող կերից ստացված ողաչոր նյութի մեջ:

Կոնկրետ որինակն ավելի լավ կրացատրի վերևում շարադրը վածը:

Եթենթագրենք հետազոտվող կերի ճակնդեղի նախնական խոնավությունը $85,50^0$ և նշանակում ե ողաչոր նյութը կլինի $14,50^0$:

100 մաս ողաչոր նյութի հիգրոսկոպիկ խոնավությունն ե 12^0 ՝ $14,50$ մաս ողաչոր նյութի մեջ հիգրոսկոպիկ չուր կլինի — X

Այստեղից՝

$$x = \frac{14,50 \cdot 12,00}{100} = 1,74$$

Այսպիսով 100 մաս կերի ճակնդեղի մեջ նախնական վիճակում ամբողջ ջուրը կլինի՝

$$85,50 + 1,74 = 87,24^0,$$

$$\text{և վոչ } \beta \text{ե } 85,50^0 + 12,00^0 = 97,50^0:$$

Լրիվ խոնավություն ունեցող կերի մեջ «հում» մոխրի, «հում» ճարպի, «հում» թաղանթանյութի և այլն, առկոսները հաշվելու համար զեկավարվում են հետեւյալ կանոնով. Ողաչոր կերի անալիգների տվյալները լրիվ խոնավություն ունեցող կերի տվյալների վերահաշվելու համար անհրաժեշտ ե «հում» մոխրի, «հում» ճարպի և այլն տոկոսը բազմապատկել այն տարբերությամբ, վոր կատարած կամաց անդամին առաջարկությամբ, վոր կատարած կամաց անդամին առաջարկությամբ:

(1) Յեթե կերը նախնական դրության ժամանակ պարունակում ե անհանքանակությամբ ջուր և հիմք չկա վախենալու, վոր պահելիս ջուրն արագ կողուշիւած և կերը կփչանա, այլ և, յեթ նյութը կարելի յե հեշտությամբ մանրացնել առանց չորացնելու, այդ զեպքում կարելի յե նախնական հիգրոսկոպիկ խոնավություններն առանձին-առանձին չլրուշել Այդ զեպքում նախրավոր ե մեկ անդամից վոր կերի ամբողջ խոնավությունը նախնական վիճակում, նախապես արագ կերպով մանրացնելով և եղափորելով առնդկված լայանով բանկայի մեջ: Այդ առնդկված խցանով բանկայից ել հետադայում վերցնում են կշռամատ՝ ամբողջ ջուրը վարելի և մյուս անալիգների համար, ջանալով, վոր կշռելու ժամանակ վորքան կարելի յե կշռանյութը թիւ շիփի լաբորատորիայի ողի հետ:

Վոչ սովիտակուցային աղոտային միացաւթյունների մեջ յեղած ազուսի վորոշման անալիգների թվական տվյալները մշակելիս պետք են նկատի ունենալ վոչ միայն կշռանկութիւն չափը և նրա խոնավության տոկոսը, այլ և ստացված մուղի ծավալը և այդ մուղի վորոշ բաժնի այն քանակը, վոր գնում և այս կամ այն վորոշման համար:

Վորովինետե սիլոսի թթվության անալիգի տվյալները միանգամից արտահայտում են սիլոսի ալս կամ այն թթվությունը նախնական վիճակում, այսինքն լրիվ խոնավությամբ, ուստի այդ թվական տվյալները հետագա մշակում չեն պահանջում:

«ԿԵՐԵՐԻ ԱՆԱԼԻԳ» ԲԼՈՒԿՆԵՐԸ

Կերերի անալիգի ժամանակ սովորաբար բավարարվում են վորոշելով նախնական խոնավությունը, հիգրոսկոպիկ ջուրը, «հում» մոխիրը, «հում» ճարպը, «հում» թաղանթանյութը, ընդհանուր աղոտը և «հում» պրոտեինը, սովիտակուցային ազոտը և սովիտակուցը և, վերջապես, անազոտ եքստրակտիվ նյութերը: Պենտոզանների, սոլայի և ուրիշ նյութերի վորոշումը համեմատաբար հազվադեպ և կատարվում:

Հաշվի առնելով կերերի վերոհիշյալ սովորական անալիգների նշանակությունը, ներքեւում տրվում են «կերերի անալիգ» բլանկները¹⁾: Այդ բլանկները կազմվում են տեսրակի ձևով այնպես, վոր առաջին յերեսում տրվում են համառոտ տեղեկություններ հետազոտվող կերի մասին (սորտը, վորակը, յերբ և ստացված, վորակից և այլն), իսկ 2, 4, 6, 8 և այլն (զույգ, ձախ) եջերում տեղավորված են բլանկները: 3, 5, 7, 9 և այլն եջերը (կենտ, աջ) մնում են մաքուր նրանց վրա անալիգի վերաբերյալ զանազան սեազրություններ, հաշվումներ և այլն կատարելու համար:

ամեն անդամ կառարել կերի լրիվ անալիգ, վորովինետե, ի հարկե, ամեն մի կերի քացարձակ-չոր նյութի քիմիական կազմն այս կամ այն չափով յենթակայե փոփոխման նույնականացնելու մաս:

1) Համեմատեցեք «Մոսկվայի Գյուղատնտեսական ինստիտուտի ընդհանուր գորտեխնիկայի լաբորատորիայի «կերերի անալիգ» բլանկների հետ:

Համեմական խոհանորդության գործոցաւը

Հիդրօսինթետիկ Տվյալներ գործոցաւը

η_{L}/η	q_{L}/m^3	$2-\eta/q$	η/m^3
$\beta_{\text{m}, \text{d}}/\beta$	$\eta_{\text{L}}/\eta_{\text{m}}$	$\eta_{\text{L}}/\eta_{\text{m}}$	η_{L}/η
$U_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$U_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$U_{\text{L}}/\eta_{\text{L}}$	U_{L}/η
$\eta_{\text{L}}/\theta/\theta$	$\eta_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$\eta_{\text{L}}/\eta_{\text{L}}$	η_{L}/θ
II	• • • • •	• • • • •	I
III	• • • • •	• • • • •	II
IV	• • • • •	• • • • •	III
V	• • • • •	• • • • •	IV
$\eta_{\text{m}, \text{d}}/\theta/\theta$		$2\eta_{\text{L}}/\eta_{\text{L}}$	η_{L}/θ
$U_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$U_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$U_{\text{L}}/\eta_{\text{L}}$	U_{L}/η
$\eta_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$\eta_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$\eta_{\text{L}}/\eta_{\text{L}}$	η_{L}/η
$U_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$U_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$U_{\text{L}}/\eta_{\text{L}}$	U_{L}/η
$\eta_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$\eta_{\text{L}}/\eta_{\text{L}}$	$\eta_{\text{L}}/\eta_{\text{L}}$	η_{L}/η

«ՀԱՆՐԵՎ մի իր կուրշումը»

«ՀԱՆՐԵՎ հայոց կորուսը»

Կ Ա Բ Ա Տ Ա Ժ				Կ Ա Բ Ա Տ Ա Ժ				Կ Ա Բ Ա Տ Ա Ժ			
1-ին	4-րդ	2-րդ	4-րդ	1-ին	4-րդ	2-րդ	4-րդ	1-ին	4-րդ	2-րդ	4-րդ
Տեղման թէ ի ի պատրի հայութը կ առաջոր նյութի կ շնորհը	.	.	.	Փարանին թէ ի ուղաշոր նյութի կ շնորհը	.	.	.	Դաստարի գործանոթի կ շնորհը	.	.	.
Տնտեսի առիջի կ ի լատիարի կ շնորհը	.	.	.	Նյութի կ շնորհը	.	.	.	Եվրոպի կ շնորհը	.	.	.
Եյս Ելի կ շնորհը
	I	Կ ա ն ո ւ ժ ա մ	.		I	Կ ա ն ո ւ ժ ա մ	.		II	Ճ ա շ ա մ	.
	II	Ճ ա շ ա մ	.		II	Ճ ա շ ա մ	.		III	Ճ ա շ ա մ	.
	III	Ճ ա շ ա մ	.		III	Ճ ա շ ա մ	.		IV	Ճ ա շ ա մ	.
	IV	Ճ ա շ ա մ	.		IV	Ճ ա շ ա մ	.		V	Ճ ա շ ա մ	.
«ՀԱՆՐԵՎ մի իր կ շնորհը	.	.	.	Կողմանի կ շնորհը	.	.	.	«ՀԱՆՐԵՎ մարդ ուստի նյութի մեջը»	.	.	.
«ՀԱՆՐԵՎ մի իր կ պահի ըստ պահի ուղաշոր նյութ-թի մեջ»	.	.	.	«ՀԱՆՐԵՎ մարդ ուստի նյութի մեջը»	.	.	.	«ՀԱՆՐԵՎ մարդ ուստի նյութի մեջը»	.	.	.
Ո թ ի ն ը	.	.	.	Մ ի շ ի ն ը	.	.	.	»	»	»	»
«ՀԱՆՐԵՎ մի իր բացանակ նոր նյութի մեջ»	.	.	.	«ՀԱՆՐԵՎ մարդ բացանակ նոր նյութի մեջ»	.	.	.	«ՀԱՆՐԵՎ մարդ բացանակ նոր նյութի մեջ»	.	.	.
«ՀԱՆՐԵՎ մուսիր նորանախան նյութի մեջ»	.	.	.	»	»	»	»	»	»	»	»

ՀՀում թաղանթան լիքի գործութեան

Սպիտակուցային ազտով և սպիտակուցայի վորոշումը

Վաղարշակացային ազտով				Սպիտակուցային ազտով			
Վաղարշակացային ազտով	Սպիտակուցային ազտով	Վաղարշակացային ազտով	Սպիտակուցային ազտով	Վաղարշակացային ազտով	Սպիտակուցային ազտով	Վաղարշակացային ազտով	Սպիտակուցային ազտով
1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
Փորձանալիքի և ողաջոր նյութի միավորներ	Փորձանալիքի և ողաջոր նյութի հանուլ
Դաստիարակութիւնի կուլտուր	Դաստիարակութիւնի կուլտուր
Նյութի հանուլ	Նյութի հանուլ
Բացարձակ չոր փետրի և բաժակի կալենցի կանուլ	Ընդունարանի կուլտուրի մեջ լրացնած հ գեղարվեստ ՀՀSO ₄
...	Տիտարինա գնացիւ և գեղարվեստ Ba(OH) ₂
...	Ամանինարդ կազմակերպութեան H ₂ SO ₄
...	Ուղիղին ազտով կար
...	Ազտով բանակը 0/0
...	Մթիճնը
ՀՀում թաղանթան լիքի գործութեան բանակը թաղանթան լիքի գործութեան	Սպիտակուցային բանակը (N×6, 25) ուղար շար նյութի միջ 0/0
...
Միջինը	0/0
ՀՀում թաղանթան լիքի գործութեան բանակը թաղանթան լիքի գործութեան բանակը	0/0
...	0/0
Միջինը	0/0
ՀՀում թաղանթան լիքի գործութեան բանակը թաղանթան լիքի գործութեան բանակը	0/0
...	0/0
...	0/0
...	0/0
...	0/0
...	0/0
...	0/0
...	0/0

Հնագույն բազմակի հ օչոր պ պատճենի հ գուշակը

	$\eta_0 \cdot P_{\text{eff}} \cdot 2 \cdot n \cdot L^2$	$\eta_0 \cdot P_{\text{eff}} \cdot 2 \cdot r \cdot q \cdot q \cdot n \cdot d^2$	$\eta_0 \cdot P_{\text{eff}} \cdot q \cdot r \cdot q \cdot q \cdot n \cdot d^2$
Փողձահանթի հ սուազով նյութի կշռով	$\zeta h^2 \cdot r \cdot n \cdot d^2 \cdot q \cdot q \cdot q \cdot h^2 \cdot 2 \cdot P_{\text{eff}} \cdot 0_0$	$\eta_0 \cdot s^2 \cdot n \cdot q \cdot q \cdot h^2 \cdot 2 \cdot P_{\text{eff}} \cdot 0_0$	$\eta_0 \cdot s^2 \cdot n \cdot q \cdot q \cdot h^2 \cdot 2 \cdot P_{\text{eff}} \cdot 0_0$
Պատարկ գողմանթի կշռով	$\eta_0 \cdot s^2 \cdot n \cdot q \cdot q \cdot h^2 \cdot 2 \cdot P_{\text{eff}} \cdot 0_0$	$\eta_0 \cdot s^2 \cdot n \cdot q \cdot q \cdot h^2 \cdot 2 \cdot P_{\text{eff}} \cdot 0_0$	$\eta_0 \cdot s^2 \cdot n \cdot q \cdot q \cdot h^2 \cdot 2 \cdot P_{\text{eff}} \cdot 0_0$
Նյութի կշռով	$\eta_0 \cdot s^2 \cdot n \cdot q \cdot q \cdot h^2 \cdot 2 \cdot P_{\text{eff}} \cdot 0_0$	$\eta_0 \cdot s^2 \cdot n \cdot q \cdot q \cdot h^2 \cdot 2 \cdot P_{\text{eff}} \cdot 0_0$	$\eta_0 \cdot s^2 \cdot n \cdot q \cdot q \cdot h^2 \cdot 2 \cdot P_{\text{eff}} \cdot 0_0$
Քաղաքային կուլտուրի մեջ լցուած հ գիշեալի թթուալի H_2SO_4	CM^3	CM^3	CM^3
Ցիարինին գնացիւ հ դեղնորմաւլ $Ba(OH)_2$	CM^3	CM^3	CM^3
Կապիսած հ ամենինիակուլ զացինորմաւլ H_2SO_4	CM^3	CM^3	CM^3
Աւելին ազուր կար գույնու գույնու	q	q	q
Ազուրի քանակությունով	0_0	0_0	0_0
Ավելին	$(200 - \alpha)$	β	β
Համամի պատճենին $(N \times 6,25)$	0_0	0_0	0_0
Նութթի dh^2	0_0	0_0	0_0
Համամի պատճեն բացարձակի չար նյութի dh^2	0_0	0_0	0_0
Համամի պատճեն նօխանի կան նյութի dh^2	0_0	0_0	0_0

Անազոս եքստրեմալին նյութերի վրանակու

ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԱՆԱԼԻԶԸ

Գյուղատնտեսական կենդանիների խմելու ջրի լավորակությունը չափազանց մեծ նշանակություն ունի: Այսպես տղաղահամ, հոտած նյութեր պարունակող կամ մեծ քանակությամբ ֆլորիդներ, սուլֆատներ և նիտրատներ պարունակող ջուրը հղի կենդանիների մեջ վիճում ե առաջացնում, իսկ ձիերի մեջ նաև աղիքների գործունելության խանգարում: Վատորակ ջուրը կաթնատու անասունների մոտագում ե նաև կաթի վորակի վրա: Խմելու ջրի մեջ պղնձի, կապարի և ցինկի միացություններ լինելու դեպքում վերջի վերջու կարող ե նույնիսկ անասունների մաս առաջացնել: Կյանքի համար պակաս վտանգավոր չե նաև մի քանի հատուկ տեսակի բակտերիաներ պարունակող ջուրը: Այս բոլոր հանգամանքներն ստիպում են խմելու ջուրը գյուղատնտեսական կենդանիների համար միայն այն դեպքում միանգամայն պիտանի համարել յերբ նա միանգամայն պիտանի յե մարդու խմելու համար:

Ծատ գժվար խնդիր ե տալ խմելու ջրի ձիշտ և բազմակողմանի առողջապահական գնահատականը: Այդ գժվարությունը պայմանավորվում ե նախ նրանով, վոր ջրի կազմի վրա ազգում են բազմազան տեղական բնական և սանիտարական պայմաններ (որինակ կեղտաջրերի, ֆաբրիկաների, գործարանների մոտիկությունը), յերկրորդ նրանով, վոր խմելու ջրի սպառիչ լաբորատոր հետազոտություններն աչքի յեն ընկնում բավականին բազմազանությամբ և բարգությամբ:

Այդ պատճառով մենք կնկարագրենք խմելու ջրի անալիզի միայն մի քանի ամենից ավելի պարզ պրիորիտերը: Պետք յեղած դեպքում կարելի յե դիմել ավելի լրիվ ձեռնարկներին¹⁾:

1) Տե՛ս «Стандартные методы исследования питьевых и сточных вод», Москва, 1927 г. Постоянное Бюро Всесоюзных водопроводных и санитарно-технических съездов, состоящее при водопроводном и санитарно-техническом комитете Научно-технического отдела ВСНХ СССР.

ԶԵՀՈՐՆԵՐԻց ու աղբյուրներից միջին նմուշ վերցնում են որպես կան յերկու անգամ (առավոտան և յերեկոյան): Լճերից, գետերից ե այլն ջրի նմուշ վերցնում են վոչ թե մակերեսից, վորտեղ ջուրը կարող ե պատահական խառնուրդներ պարունակել, այլ մոտ 50 սմ՝ խորությունից, ընդ վորում վերցնում են այսպես. պարանին կապած շիշը ծանրության հետ փակում են խցանով, վորին կապած ե մեկ ուրիշ բարակ պարան, և ընկղմում ջրի մեջ, ապա քաշում են բարակ պարանը, վոր խցանը բացվի, և այդպիսով շիշը լցնում են ջրով¹⁾: Շիշը պետք ե նախապես լվացված լինի թորած ջրով և նմուշ վերցնելուց անմիջապես առաջ մի քանի անգամ լվացված հետազոտվող ջրով: Շիշը լցնում են մինչև բերան և փակում հղկված ապակյա խցանով:

Ավելի լավ ե վերցրած ջուրն անմիջապես անալիզի լին թարկել իսկ չեթե վորեե պատճառով այդ հսարավոր չե, այդ դեպքում այսպես են անում. աճառը, չեթե անալիզը կատարվում ե 24 ժամից վոչ շուտ, ջուրը կոնսերվում են. մի բաժինը պահում են թթվելիությունը վորոշելու համար և կոնսերվում են ավելացնելով 2 լի. սմ. 25 տոկոսանի H_2SO_4 մեկ լիտր ջրին, մյուս բաժինը—պինդ մնացորդը վորոշելու համար, կոնսերվում են՝ ավելացնելով 2 լի. սմ. քլորոֆորի 1 լ ջրին: Բացի այդ, անհրաժեշտ ե անալիզի յինթարկվելիք ջրի մի մասը պահել նաև առանց կոնսերվող նյութեր ավելացնելու: Ամառը նմուշը պահում են սառը տեղում: Զմեռը, յեթե անհրաժեշտ դիմում փոխադրել 10—20 կմ. սառչելը կանխելու համար խցանոր փակված 22ի վրա դնում են բարձ տաք ջրով լցրած, նախապես այն լավ փաթաթելով, վորպեսզի չպաղի. յերկար տարածություն փոխադրելու գեղքում պետք ե տաք ջուրը փոխել:

ՀՈՏՆ ՈՒ ՀԱՄՔ ՎՈՐՈՇԵԼԸ

Հոտը կարող ե ցույց տալ, վոր ջուրը կեղտոտված ե աղբաջրերով, որպանական նյութերով և այլն: Հետազոտվող ջրի հոտը վորոշում են սովորական ջերմաստիճանին և համարյա 100°-ին:

Սովորական ջերմասինուին ջրի հոտը վորածելու հետազոտվող ջուրը լցնում են 22ի մեջ մինչև կեսը և ուժեղ թափառում են: Բայց են անում խցանը և հոտ են քաշում:

1) Ավելի ճիշտ կլինի առանձին նմուշներ վերցնել մակերեսից և տաքը բռնություններից և կատարել ջրի առանձին անալիզները:

Համարյա 100°-ին ջրի նոսր վարությունը եռլենմեյերի 500 խ. սմ. տարռողության կոլբայի մեջ լցնում են 250 խ. սմ. հետազոտվող ջրից, փակում են ժամացույցի ապակիով և տաքացնում են համարյա մինչև յեռալը: Թողնում են հինգ բոպե սառի, թեթև թափանարում են և հոտ քաշում:

Ջրի հոտի հետազոտման արդյունքները համառոտ գրանցում են (արօմատիկ, ծկան, խոտի, տղղած, ճահճային հոտ և այլն): Հոտի ուժը դնահատում են 5 թվանշանով, դնելով այս կամ այն թվանշանը ջրի վորակը վորոշող յուրաքանչյուր բառից հետո:

Ենթե ջուրը կասկածելի չե, նրա համն են փորձում: Համը վարոշելիս սովորաբար բնորոշում են այս կամ այն արտահայտությամբ, իսկ քանակապես նույնպես հինգ թվանշանային սիստեմով:

ՊՂ.ՏՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՍՏՎԱԾՔԻ ՅԵՎ ՌԵԱԿՑԻՈՆ ՎՈՐՈՇԵԼԸ

Ջրի պղտորությունը սովորաբար վորոշվում է աչքաչափով հետեւյալ տերմիններով. թույլ ապալեսցիա, ուժեղ ապալեսցենցիա թույլ պղտորություն, ուժեղ պղտորություն և այլն: Միաժամանակ նշվում է գույնը, հավանական բնույթը և այլն:

Նստվածքը բնորոշվում է այսպիսի տերմիններով—չնչին, նշանակալի, աննշան և այլն (քանակապես) և կավային, ավագային, բյուրեղային, սև և այլն (վորակապես):

Ջրի ռեակցիայի վորակական վորոշումը կատարում են նրա մեջ կարմիր և կապույտ լակմուսի թուղթ թաթախելով: Թթվային ռեակցիայի դեպքում (լակմուսով) կատարում են լրացուցիչ ռեակցիա մետիլորանժի ներկայությամբ, լակմուսով հիմքային ռեակցիա հայտարելելու դեպքում՝ լրացուցիչ ֆենոլֆտալեյինով: Լավ խմելու ջուրը պետք է ունենա կամ չեղոք կամ թույլ հիմքային (բիկարբոնատներից) ռեակցիա: Թթու ռեակցիան թույլտարելի յե միայն այն դեպքում, յերբ այդ կախված ե մած քանակությամբ ազատ ածխաթթվից կամ թե հումինաթթվի ներկայությունից:

ՊԻՆԴ ԿԱՄ ԶՈՐ ՄՆԱՅՈՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Պինդ կամ չոր մնացորդ են անվանում այն մնացորդը, վորատացվում է մեկ լիտր ջիւտրած ջուրը 120—140°-ում գոլորշիացնելուց և չորացնելուց հետո: Սովորաբար լավորակ ջուրը տալիս ե սպիտակ նստվածք: Որգանական միացությունների, այլև յերկաթի և մանգանի միացությունների ներկայությունից նստվածքի գույնը լինում է դեղնավուն կամ գորշավուն: Ընդունում են, վոր լավ ջրի լինում է դեղնավուն կամ գորշավուն:

մեջ պլինդ նստվածքի քանակը պետք և լինի վոչ ավել 500 մգ-ից
մեկ լիտր ջրում:

Անորթեր յեկ զարծիքներ

1. Ֆարֆորե կամ պլատինե թաս 50—75 լի. սմ. տարողությամբ;
2. Զափական կուլա 250 լի. սմ. տարողությամբ;
3. Զբային բաղնիք;
4. Զորացնող պահարան;
5. Եքսիկատոր:

ՎՈՐՈՇՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

1. Մաքուր ֆարֆորե (կամ պլատինե) թասը շիկացնել, պահցնել եքսիկատորի մեջ և ապա կշռել:
2. Կոլբայի մեջ չափել 250 լի. սմ. ֆիլտրած հետազոտվող ջուր:
3. Չափված ջրից մի մասը լցնել ֆարֆորե թասի մեջ;
